

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>


E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

# Արցախի



պատմությանն ու  
հուշարձանների պահպանության  
նվիրված

# ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ԼՂՏ Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ  
սպորտի նախարարություն

**ԱՐՅԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՆ  
ՈՒ ՆՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ  
ՊԱՆՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ  
ԳԻՏԱԿԱՆ ՆԱՄԱԺՈՂՈՎԻ  
ՆՅՈՒԹԵՐԸ**

Ստեփանակերտ 2002

ՀՏԴ 719  
ԳՄԴ 79.0  
Ա 948

Տպագրվում է ԼՂՀ Մշակույթի, երիտասարդության  
հարցերի եւ սպորտի նախարարության հուշար-  
ձանների պահպանության եւ ուսումնասիրման  
վարչության գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմեց՝ **Սլաւա Սարգսյանը**  
Ձեւավորումը՝ **Վալերի Պեպրոսյանի**

Ա 948 Արցախի պատմությանն ու հուշարձանների պահպա-  
նությանը նվիրված գիտաժողովի նյութերը (Կազմեց՝  
Ս. Սարգսյան) - Եր., Նոյան տապան. 2002. 80 էջ:

2001թ. նոյեմբերի 7-8-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրա-  
քաղաք Ստեփանակերտում ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ  
սպորտի նախարարության հուշարձանների պահպանության եւ ուսումնասիր-  
ման վարչությունը կազմակերպեց Արցախի պատմությանն ու հուշարձաննե-  
րի պահպանությանը նվիրված գիտական համաժողով. որտեղ ելույթ ունեցող-  
ները անդրադարձան ոչ միայն Արցախի պատմության առանձին պորթլեմների,  
այլև հուշարձանների պահպանությանը՝ արժեքավորելով պահպանության, ու-  
սումնասիրության գործի կարևորությունը հատկապես Արցախում եւ առաջադ-  
րելով որոշակի հարցեր՝ ցույց տալով դրանց լուծման ուղիները:

Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի,  
պատմության, ինչու չէ՝ նաև քաղաքական այսօրվա իրավիճակը եւ դրանում  
հուշարձանների դերն ու նշանակությունը, հուշարձանների պահպանության եւ  
ուսումնասիրման վարչության գիտխորհուրդը նպատակահարմար գտավ հրա-  
տարակելու համաժողովի նյութերը, որը կարող է հետաքրքրել ոչ միայն մասնա-  
գետներին, այլև ընթերցող լայն շրջաններին:

4403000000  
Ա 804(01)-2002 2002

ԳՄԴ 79.0

ISBN 99930-51-48-9

© ԼՂՀ Հուշարձանների պահպանության եւ  
ուսումնասիրման վարչություն

© Նոյան Տապան

### ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

(Արմեն Սարգսյան, ԼՂՀ մշակույթի,  
երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար)



Հարգելի ընկերներ, գիտա-գործնական  
համաժողովի հարգելի մասնակիցներ, վերջին  
ժամանակներս Արցախում կազմակերպվում  
են մի շարք համաժողովներ, գիտա-գործնա-  
կան կոնֆերանսներ, նվիրված այս կամ այն  
խնդրին: Այսօրվա մեր հավաքն իր բնույթով,  
բովանդակությամբ տարբերվում է նախորդնե-  
րից: Առաջին անգամ մեր նորանկախ հանրա-  
պետությունում կազմակերպվում է գի-  
տա-գործնական կոնֆերանս՝ նվիրված մեր  
ազգային արժեքներին՝ պատմության եւ մշա-  
կույթի հուշարձաններին, դրանց պահպանու-  
թյանը, Արցախի պատմությանը: Եվ այդ տե-  
սակետից էլ այն կարևորվում է և առանձնանում մանաւանդ այլևայլ  
հավաքներից, համաժողովներից:

Վերջին տարիներին որոշակի առաջընթաց եւ աշխուժություն է  
նկատվում Արցախի պատմա-ճարտարապետական հուշարձանների  
գիտական ուսումնասիրման, պահպանության եւ վերականգնման ա-  
պարեզներում, թեև, արդարությունը պահանջում է ասել, որ վերական-  
գնման պրոցեսը համեմատած մյուս բնագավառների հետ, առայժմ չի  
գտնվում այն մակարդակի վրա, որ այսօր առավել մեր առջև ծառայած  
է: Արցախում՝ ներառյալ ազատագրված տարածքները, այսօր 10000  
հուշարձաններ կան և իրոք տնտեսական այս ծանր պայմաններում դժ-  
վար է միայն պետական միջոցներով վերականգնել մեր նախնիների  
բողած մշակութային արժեքները:

Ես կարծում եմ, որ գիտական կոնֆերանսում առաջարկվող պար-  
լեմները, զեկուցումների մեջ դրված հարցերը, առաջարկությունները  
կընդհանրացվեն և կփորձվի համատեղ ուժերով, ոչ միայն մեր՝ Մշա-  
կույթի նախարարության, այլև հայաստանյան տարբեր գիտական օ-  
ջախների, ինչպես նաև՝ Հայաստանի Մշակույթի նախարարության,  
Արցախի թեմի միջոցով լուծել մեր առջև դրված խնդիրները: Այսօր, քան  
երբևէ պատմությունը, ճակատագիրը մեզ առավել քան հնարավորու-  
թյուն է ընձեռնել ավելի աշխուժացնելու այդ աշխատանքները, ուսում-  
նասիրելու-նորոգելու այն հուշարձանները, որոնք դարձելով գտնվել են  
գերության մեջ:

Ես շնորհավորում եմ գիտական կոնֆերանսի բոլոր մասնակիցներ-

ԽՈՍՔ ԲԱՅՄԱՆ

04 № 10805 11 2018<sup>3</sup>

րին, վստահ եմ և ուրախ կլինեմ, որ համաժողովն այս պատերի ներքո ավարտվելուց հետո, վերջնական ավարտը չի ունենա և առաջարկվող պայքերն ենք, գեկուցումների մեջ տրվող հարցերը, առաջարկությունները գործնականում կիրառություն կգտնեն: Ես կխնդրեի, որ հարցերը լինեն ավելի շատ, որ գեկուցողներն առավել շատ կանգ առնեն պրակտիկ, կոնկրետ հարցերի, որպեսզի այս գիտական հավաքը ուղեցույց լինի այսպես ընդհանուր նախարարության հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության աշխատանքի համար:

Շնորհակալություն եմ հայտնում բոլոր հյուրերին, մասնակիցներին, որ հարգեցին մեր հրավերը և եկան մասնակցելու այս գիտական համաժողովին:

Ցանկանում եմ հաջողություններ Ձեր հետագա աշխատանքում:

## ՎԵՐԻՆ ԽԱՉԵՆԻ ՆՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

*(Ձամալ Թաղևոսյան, ՊՄՊ Արցախի տարածքային ծառայության պետ)*



Խաչենը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկը հանդիսացող Արցախի գավառներից է եղել: 9-13-րդ դարերում Խաչեն անունով սկսեց կոչվել Արցախ նահանգի մի մասը:

Պատմա-քաղաքական մի շարք անցքերի հետևանքով, 12-րդ դարի կեսերին Խաչենի իշխանությունը կիսված էր երեք ճյուղի, որոնցից յուրաքանչյուրի զբաղեցրած տարածքը ստացել էր իր հատուկ անունը՝ Ներքին Խաչեն, Կենտրոնական Խաչեն կամ Հաքերք և Վերին Խաչեն կամ Ծար: Ուշ միջնադարյան աղբյուրներում Խաչեն անվան տակ այդեն հասկացվում էր Խաչենի մելիքության բռնած տարածքը:

Խաչենագետի ավագանուն, որովհետև նախկին նահանգի տարբեր մասերում 14-րդ դարի սկզբից սկսած, զբաղեցնում էին Գյուլիստանի, Ջրաբերդի, Ծարի, Սողբի և Վարանդայի մելիքությունները:

Խաչենը հարուստ է պատմաճարտարապետական, հնագիտական և բազմատեսակ այլ մեծարժեք կոթողներով: Արցախյան հողը դեռ չուսումնասիրված մագաղաթյա մի գիրք է, նրա ամեն մի քարն իր հերոսական պատմությունն ունի: Յուրաքանչյուր ժողովրդի պատմական անցյալի, ազգային առանձնահատկությունների և կոյուրիտի մասին առաջին պատկերացումը կազմելու համար բավական է տեսնել նրա պատմության, մշակույթի որևէ կոթող-հուշարձան:

Քանի որ խոսք պիտի գնա Վերին Խաչենի պատմաճարտարապետական հուշարձանների ներկա վիճակի մասին, հենց սկսենք դրանից: Այս տարածաշրջանը ժամանակի ընթացքում կոչվել է նաև Ծար, իսկ սովետների օրոք բռնակցվել է Ադրբեջանին և կոչվել Քերթաշարի շրջան: Մինչև վերջին ժամանակներս ոչ մասնագետ մարդկանց մեծ մասին քիչ էր հայտնի, թե նշված շրջանի տարածքում որքան հայկական պատմաճարտարապետական հուշարձաններ կան: Եվ դա մեր մեղքը չէր: Հայ տարրը այնտեղից աստիճանաբար դուրս էր մղվել, իսկ պատմությամբ ու հնեաբանությամբ զբաղվող հայ գիտնականներն անգամ առանց արգելքների չէին կարող քափանցել այնտեղ, ծանոթանալ հուշարձաններին: Մեզ օտարել էին մեր մշակույթի այդ հատվածից, ինչը չի կարելի ասել Դաղիվանքի մասին, քանի որ վանական այս մեծ համալիրը գտնվում է Մարտակերտի շրջանին կից տարածքում և հայերի

հոսքը դեպի այնտեղ միշտ էլ եղել է կանոնավոր: Բացի այդ, Դադիվանքի մասին շատ է գրվել: Այս գեղեցիկ վանական համալիրը Արցախի հուշարձանների առաջնեկ պլատի համարել, որն այսօր գտնվում է շատ տխուր վիճակում: Պարբերաբար շրջակա գյուղերի՝ Վ.Հռոաթաղի, Հարությունա գոմերի, Հաթերքի, Վաղուհասի, Կոճողտի և այլ գյուղերի դպրոցականները գալիս են Դադիվանք՝ կավիճով, ամուխով և էլ ինչով ասես, վանքի պատերին թողնում իրենց անունները, ազգանունները, փոխանակ իրենց խնամքի ու հովանավորության տակ առնեն երկրամասի հուշարձանների պահպանության գործը:

Շարունակվում են արձանագրվել գանձախուզության դեպքեր: Մարդիկ անարգել կերպով քափանցում են շրջակա տարածքում գտնվող վանական և եկեղեցական համալիրները, պատերից պոկում փոքրիկ խաչքարերը, արձանագրություններով վեմերը, կարծերով, քե դրանց տակ քաքցված կլինեն Դոփյան իշխանների գանձերը: Բախտախնդիրների այս ձեռնարկած արշավը ողբերգական ու անողորմիկ հետևանքներ կարող է թողնել պատմաճարտարապետական հուշարձանների վրա: Հենց դրա հետևանքն է, որ մեզ հասած հավաստի տեղեկությունների համաձայն, քարուքանդ է արվել Դադիվանքից 1.5 կմ հյուսիս-արևելք գտնվող, Վերին Խաչենի իշխանական ճյուղերից մեկին պատկանող, տոհմական գերեզմանոցը: Այդ գերեզմանատնից անհետացել են մի շարք մահարձաններ, հազվագյուտ արձանագրություններով խաչքարեր, որոնք ունեցել են պատմական և ճանաչողական մեծ արժեքներ:

Մեկ ուրիշ դառն իրողություն. օրը կեսօրին երկու անձնավորություն (Հայաստանի քաղաքացիներ) սայլակավոր մոտոցիկլետով եկել են Չարեքտար գյուղը, մտել վանքը, տակնուվրա արել եկեղեցու գավիթը, որպեսզի գտնեն Ճարա քաջանուն իշխան Գրիգորի գերեզմանը և «կիսեն» նրան պատկանող գանձերը, որոնք իբրև քե դարեր առաջ իշխանի անյունի հետ թաղվել են գերեզմանում: Նրանք փոսեր են փորել գավթում, հետո պահակի տղային կարգադրել լցնել այդ փոսերը, իսկ իրենք՝ անհետացել: Կատարվածը անշուշտ, մեր իրավապահ մարմինների անգործության, հասարակության անհոգության և հուշարձանների պահպանության շրջանային աշխատողների անտարբերության հետևանքն է:

Վերին Խաչենի հոգևոր կյանքում ժողովրդին մատուցած ծառայություններով Դադիվանքին չի գիջել նաև Դոփյանների իշխանական վանական համալիրներից մեկը՝ Սուրբ Աստվածածինը: Այդ համալիրը գտնվում է Դադիվանքից դեպի արևմուտք, մոտ 1.5-2 կմ հեռավորության վրա, Թարթառ գետի աջ ափին, անմատչելի, անտառածածկ լեռան ստորոտում: Վանական համալիրը բաղկացած է երկու հուշարձանախմբերից: Հյուսիսային հուշարձանախմբում գլխավոր եկեղեցին

Ս.Աստվածածինն է, որն ըստ աղբյուրների, կառուցվել է 1174-78թթ Մածնաբերդի Կյուրե թագավորի աղջկա՝ բարեպաշտ Մամբանի ծախսերով: Իսկ հարավային հուշարձանախմբը բաղկացած է գույգ մույթերով եռանավ բազիլիկ եկեղեցուց, որի արևմտյան մասից կցված է ընդարձակ գավիթը և մատուռը: Նրա շրջակայքում պահպանվել են աշխարհիկ և կենցաղային շատ շենքերի ավերակներ: Հուշարձանները հարավ-արևելյան կողմից պատված են եղել 2.5 մ հաստությամբ ունեցող բերդապարսպով, որի փլատակներն են մնացել միայն, իսկ մեծ գերեզմանատնից ոչ մի հետք չի մնացել:

Երբ 1993թ. գրանցում էինք Քարվաճառի տարածքում գտնվող հուշարձանները, եկեղեցու ճակատակալ քարի վրա եղել է նրա կառուցման մասին մի արձանագրություն: Սակայն, հետագայում տեսչական շրջագայման ժամանակ, արձանագրությունն անհետացել էր: Երկար որոնելուց հետո մի անկյունում գտանք հայ վանդալի ձեռքով ջարդախույթ արված արձանագրության մի քանի բեկոր: 824 տարի գոյություն է ունեցել այդ արձանագրությունը, մարդիկ հարգանքով ու երկյուղածությամբ են նայել Աստծո տան այդ գրությանը, իսկ այսօրվա հայ քրիստոնյան՝ առանց երկյուղի և ափսոսանքի, ոչնչացնում է իր ժողովրդի ճարտարապետական ժառանգության դասական նմուշը: Մի՞թե սա մարսելու բան է: Էլ ինչու՞ ենք պայքարել, արյուն թափել, եթե հիմա պլատի ոչնչացնենք մեր ինքնության վկաները:

Հնագույն պատմություն ունի Ծար ավանը, որի անվամբ էլ դարեր շարունակ կոչվել է ընդարձակ գավառը: Այս հնագույն հայկական բնակավայրում 1274թ. կառուցվել է Ս.Գրիգոր եկեղեցին, իսկ 1179թ.՝ առայսօր լավ պահպանված Ս.Սարգիսը: Այս հուշարձանների շրջակայքում եղել է մեծ հանգատարան, Դոփյան իշխանական տան տոհմային գերեզմանոցը, տարբեր ժամանակներում քանդակված խաչքարեր և պաշտամունքային այլ կառույցներ: Չար ձեռքն այստեղ էլ է թափանցել: Սուրբ Սարգիս եկեղեցու հարավային պատի վրա գտնվող արձանագրություններից մեկը փորձել են պոկել, բարեբախտաբար չի հաջողվել հանել արձանագրված մեծ քարը, բայց փչացվել, անընթեռնելի են դարձել որոշ տառեր ու բառակապակցություններ: Իրար են խառնել նաև ավանի կենտրոնում գտնվող կիկլոպյան հսկա հղկված ու կարկառային քարերը:

Նման փաստեր են նկատվել նաև Բուզլու, Բահարլու, Չագլիկ, Աղկայա, Թեքյագայա, Օրախլի, Սոյուխբուլաղ, Չափնի, Գանլիքենդ, Դամիշլու և այլ գյուղերում, որտեղ կան վանական համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, ամրոցներ, դամբարանաբլուրներ, խաչքարեր և այլ տեսակի հուշարձաններ:

# ԱՐՅԱՆԻ ՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԸ

(Յուրի Ասրյան, պատմական գիտությունների  
բեկնածու, ԱրՊՀ դասախոս)



Լինելով Հայկական լեռնաշխարհի անբաժանելի մասը, Արցախի ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է նյութական և հոգևոր քարձրարժեք մշակույթ ու իր համեստ ավանդը ներդրել համաշխարհային քաղաքակրթության գանձարանում:

Արցախի տարածքում հայտնաբերված են հնեաբանական նյութեր՝ բրածո խխուհոցներ (Քռասնի), ծովաստղեր (Քարաղբյուր): Գիտական մեծ արժեք ունի նախաքոչնի (արխեոպտերիքս) բրածո գլուխը՝ պատահականորեն հայտնաբերված Հաղբյուրի շրջանի Պետրոսաշենի տարածքից, որը 4-րդ մմուշն է աշխարհում: Արցախում արձանագրված են հին քարեդարին պատկանող մի շարք քարանձավ-բնակավայրեր՝ Ագոխի, Ծմանեքի, Ծծախաչի, Հյունոտի, Ավանա, Ալեքսանա-Ղուգունի, Աստղաշենի, Շիկաքարի, Պախրայի քարանձավները: Այս քարանձավ-բնակավայրերից ամենանշանավորը Ագոխի քարանձավն է՝ Հաղբյուրի շրջանում, որի 5-րդ հնագիտական շերտում 1968թ. հայտնաբերվել է հնագույն մարդու (կնոջ) ստորին ծնոտ երկու սեղանատամով: Այն նախկին ԽՍՀՄ տարածքում ամենահնագույն գտածոն է և պատկանում է արխեանտրոպ մարդկանց խմբին:

Արցախի տարածքում արձանագրված են մեգոլիթին, նեոլիթին, էնեոլիթին, բրոնզեդարին և վաղ երկաթի դարաշրջանին (քնոթագրական) վերաբերող հուշարձաններ:

**Մարդակերպի շրջան** - Արցախում հնագիտական հուշարձաններով հարուստ տարածքը համարվում է Մարտակերտի շրջանը:

Հնագույն դամբարանախմբեր տեղակայված են արցախական Տիգրանակերտ փլուզված բնակավայրի շրջապատում, Առաջածոր, Ծմակահող գյուղերի տարածքում, Խաչենագետի մերձակա գյուղերի շրջապատում, Մեծառանից սուրբ Հակոբա վանքի մերձակայքում: Առավել մեծ թվով դամբարաններ և դամբարանադաշտեր առկա են Թարթառ գետին մերձակա բնակավայրերի տարածքում՝ Հաթերք, Մեծ Ծեն, Դյոմբոն, Նարեշտար, Չղրյան, Մեհմանա, Վերին Հոռաքաղ, Ներքին Հոռաքաղ և այլ բնակավայրերի տարածքներում:

**Նաղբյուրի շրջան** - հնագիտական հուշարձանների մեծ մասը խմ-

բավորված են Դուրուչայի և նրա վտակներ Իշխանագետի, Տողի և Մեխակի շրջակայքում: Մեծ թվով դամբարաններ արձանագրված են Ագոխ, Մեծ Թաղեր, Տունի, Արփագյարուկ, Ծամձոր, Ջրակուս, Ծակուռի, Դուրուկչի, Էղիլլու, Տող, Աղբուլաղ, Աղջաքենդ, Յուր, Առաքյուլ և Դուրանլար գյուղերի և Հաղբյուր ավանի շրջապատում:

**Մարտունու շրջան** - Այստեղ առավելապես աչքի են զարնվում Ամարասի հովտի հուշարձանները՝ Սոս, Մաճկալաշեն, Քերթ, Հերիեր և Ծովատեղ բնակավայրերում: Մեծ թվով դամբարաններ հանդիպում են Կուսաբերդ գյուղի տարածքում, Մարտունի ավանի շրջապատում: Առավել հայտնատ հնագիտական նյութեր են հայտնաբերված Ծարտար գյուղի «Ալի-Բալի» տեղամասից: Հնագիտական մշակույթի դամբարաններ և դամբարանադաշտեր առկա են նաև շրջանի Թաղավարդ, Կարմիր շուկա, Սպիտակաշեն, Սխտորաշեն, Ավդուռ, Մյուրիշեն, Գիշի և այլ գյուղերի տարածքներում:

**Ասկերանի և Շուշիի շրջաններ** - Այս շրջանների հնագիտական հուշարձանները կենտրոնացված են Կարկառ գետի և նրա վտակների (Բաղարա, Բալուջա, Հոնի գետ) շրջապատում: Ամենից նշանավորը համարվում է Լուսածորի (Մեհտիշեն) Քարաբլուր բերդ-բնակավայրը և նրան պատկանող Խոջալուի դամբարանադաշտը: Մեծ թվով դամբարանաբլուրներ առկա են Աղղամ-Ստեփանակերտ խճուղու երկու կողմերում: Առանձին խումբ են կազմում Մալիբեկլուի, Հասանաքաղի, Դաշուշենի, Քռասնի, Շոշ գյուղերի տարածքում տեղակայված դամբարանաբլուրները: Նմանակերպ դամբարանաբլուրներ հանդիպում են Կրկժան, Խանաձախ, Բալլուջա, Փահլուլ բնակավայրերի տարածքում: Դամբարանախմբեր առկա են նաև Խաչմաչ, Մալուշեն, Գարաբուլաղ, Չանախչի և Սզնեք գյուղերի տարածքում: Առանձնահատուկ դամբարանային խմբեր և բնակատեղիներ են տեղակայված Կարկառ-Բաղարա և Հոնիգետ վտակների մերձակայքում և նրանց կից անտառներում: Մեծ թվով դամբարանադաշտեր տարածված են Դաշբուլաղ, Դահրավ, Խանձր և Բաղարա գյուղերի տարածքներում: Դամբարանաբլուրներ առկա են նաև Խնապատ, Նորագյուղ, Սարդարաշեն, Հիլիս, Խնձրիստան, Դշլաղ և Մեյլիշեն գյուղերի տարածքներում:

Լիսագոր-Չանգեգոր խճուղու երկու կողմերում առկա են խոշոր և փոքրածավալ դամբարաններ, որոնք հանդիպում են Կանաչ-դալա (Կանաչ բերդ), Եխձահող, Գարաղշլաղ (Բերդածոր) գյուղերի տարածքներում: Ընդհանուր առմամբ Արցախի տարածքում հանդիպում են տարբեր տիպի դամբարաններ, որոնք աչքի են ընկնում կառուցողական որոշակի առանձնահատկություններով:

# ՆՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԻ ԴՐՎԱԾՔԸ ԱՐՅԱԽՈՒՄ

(Մանուշակ Տիտանյան,  
վերանորոգող-ճարտարապետ)



1989թ. Հայաստանի նախարարների խորհրդին կից պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման գլխավոր վարչությունը ոտք դրեց Արցախ աշխարհի ի դեմս նախագծողների և շինարարների: Վերջիններս շատ մեծ պատասխանատվությամբ էին մոտենում ինչպես նախագծման, այնպես էլ շինարարական աշխատանքներին: Հուշարձանների ուսումնասիրման, չափազրման և էսքիզային փուլերը կատարվում էին վարչության նախագծային ինստիտուտի կողմից, հաստատվում վերջինիս տեխնիկական խորհրդում և, ապա, անցնում աշխատանքային փուլին: Հարկ եղած դեպքում, եթե հուշարձանի վերականգնումը շատ բարդ էր և վիճելի, նախագիծը էսքիզային փուլում ներկայացվում էր գլխավոր վարչության գիտա-մեթոդական խորհրդին, որն էլ տալիս էր վերջնական եզրակացությունը:

Այսպիսով, հուշարձանը վերականգնվում էր ոչ թե պատվիրատուի կամայական ցանկությամբ, կամ էլ նախագծողի լավ կամ վատ ճաշակին համապատասխան, այլ միայն և միայն ելնելով տվյալ հուշարձանի օբյեկտիվորեն գոյություն ունեցող վիճակից և պայմաններից:

Այսպիսի սկզբունքային մոտեցումով են աշխատել Արցախում մինչև 1992թ.: Այդ ընթացքում կատարվել են որոշակի թվով նախագծային և, մասամբ, շինարարական աշխատանքներ: Վերականգնվել են Հաղորթի շրջանի Վանք գյուղի, Ամարասի Վանքի եկեղեցիները, մասամբ Խնածախի, Վերիշենի (Շահումյանի շրջան) և Բալուջայի եկեղեցիները: Մի շարք հուշարձաններում կատարվել են մաքրման հողային աշխատանքներ, որոնք թույլ են տվել ոչ միայն ավելի լավ ուսումնասիրել բուն հուշարձանը, այլ նաև շրջակա տարածքը և պահպանված բեկորները: Այս տեսակետից շատ հետաքրքիր և բեղմնավոր աշխատանքներ են կատարվել Գանձասարի, Ամարասի, Գոչավանքի վանական համալիրներում, Հերիեր գյուղի եկեղեցում: Այս հուշարձանների համար կազմվել են նախագծեր, որոնք անցել են գիտա-մեթոդական խորհրդով և արժանացել հավանության: Կազմվել են նաև որոշ նախագծեր, որոնք

սակայն ընդհանրապես մնացել են դարակների վրա՝ գտնվելով վտանգավոր շրջաններում: Դրանց թվին են պատկանում Շոշ և Տող գյուղերի եկեղեցիների նախագծերը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակումից հետո Արցախի պատմամշակութային հուշարձանների ճակատագիրն անցավ տեղական մարմինների, մասամբ էլ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի տնօրինության տակ: Չուզահետաքար սկսվեցին նաև ակտիվ պատերազմական գործողությունները: Ցավոք, այս երկու գործոնն էլ հենց բախտորոշ եղավ հուշարձանների ապագա ճակատագրի համար: Հանրապետությունը դեռ երկար ժամանակ հնարավորություն չէր ունենալու հուշարձաններով զբաղվելու:

Ահա այսպիսի օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններում Արցախի հուշարձաններն ընկան կամայականության գիրկը: Եղան հուշարձաններ, որոնք լրիվ կամ մասամբ ոչնչացվեցին պատերազմական գործողությունների և թալանի հետևանքով: Սակայն նրանց սպառնում էր մեկ այլ վտանգ, որին էլ մենք կանրադառնանք ավելի մանրամասն:

Ի երջանկություն մեզ, Արցախում սկսվեց զգացվել գործող եկեղեցիների ավելի ու ավելի մեծ կարիք: Այդ իսկ պատճառով Արցախում նոր շենյով ու թափով ծավալվեցին նոյուզման աշխատանքները, սակայն արդեն ոչ նախկին որակով և պատասխանատվությամբ:

Սկսե՛նք նրանից, որ նախագծերը սկսեցին կատարվել մասնավոր անձանց կողմից, որոնք չունեին ոչ միայն դրա իրավունքը, այլ նաև համապատասխան կրթություն: Եվ դրանում, ես կարծում եմ, որ հարկ է մեղադրել Արցախի թեմին, որն այդ հարցում, փաստորեն ցուցաբերեց ուրաշակի անփութություն և անպատասխանատվություն: Այդպես կատարվեցին Բաղարայի և Խանձրի եկեղեցիների նորոգման աշխատանքները: Աշխատանքներ կատարվեցին Բալուջայի եկեղեցու վրա, որոնք բոլորովին չէին համապատասխանում նախկին նախագծին:

Սակայն այս ամենը չարիքի փոքրագույնն էր: Նույն սկզբունքով սկսեցին մոտենալ այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Գանձասարի վանական համալիրը և Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին: Վերջիններիս կանրադառնանք ավելի մանրամասն:

Գանձասարի վանական համալիրի համար, ինչպես նշեցինք վերը, ժամանակին արված է եղել բարձրորակ նախագիծ՝ հաստատված էսքիզային փուլում: Սակայն, հետագայում, աշխատանքային նախագծի պատվեր Արցախի թեմի կողմից չտրվեց: Ի հակառակ դրան, ռմբակոծված և ավերված երիցատան փոխարեն կառուցվեց մի նոր մասնաշենք, որն իր բովանդակությամբ և կերպարով բոլորովին չէր համապատասխանում համալիրի պատմականորեն կազմավորված ճարտարապետական կերպարին: Կառույցը, ի տարբերություն մյուս օժանդակ կա-

ռույցների, ոչ թե կառուցված է խամ քարով, այլ սրբատաշ մեծածավալ քարերով, որով փորձում է մրցել համալիրի պաշտամունքային կառույցների հետ: Բարեբախտաբար հաջողվեց կանգնեցնել երկրատան երեք մեծ շքամուտքերի կառուցումը:

Համալիրում նորոգվել է նաև գավիթը: Արևմտյան ճակատի մուտքի առջև կառուցվել են աստիճաններ, որոնք կայանդակելին անգամ ցանկացած սովորական շենքի ճակատ: Ռոտունդան նորոգվել է բացարձակ հաշվի շառնելով տեղում գոյություն ունեցող նախկին ռոտունդայի հետքերը:

Պարսպապատից դուրս կատարվում է շինարարություն, որին չխանգարելու համար տեղահան են արվում հին գերեզմաններ: Վերջին փաստը բողոքում ենք առանց մեկնաբանության:

«Նախագծերը», ըստ որի կատարվում են շինարարական աշխատանքները, բացարձակապես չեն վերահսկվում ո՛չ մասնագետների, և ո՛չ էլ պետության կողմից:

Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին պատկանում է Արցախի լավագույն հուշարձանների թվին: Եվ թվում է, թե նման հուշարձանին կարելի էր մոտենալ ավելի մեծ պատասխանատվությամբ: Սակայն՝ ոչ: Եկեղեցում վերացրեցին հոգևոր դասը և ոչնչացրեցին հետքերը: Վերջինս պարտադիր է եկեղեցիներում՝ հոգևորականներին ժողովրդից առանձնացնելու համար: Միայն վանքային եկեղեցիները չունեն հոգևոր դաս, քանի որ միայն հոգևորականներ են մասնակցում բոլոր տեսակի եկեղեցական արարողություններին:

Եկեղեցու թմբուկը նորոգվեց շատ մակերեսային, առանց համապատասխան կոնստրուկտորական ուսումնասիրության: Վեղարը քիթեղապատվեց. այն դեպքում, երբ կային քարե ծածկի բոլոր հետքերը: Եկեղեցու լանջերը նույնպես քիթեղապատվեցին այնքան սխալ և անորակ, որ քաղերը ներսից խոնավ են, որն էլ աստիճանաբար բերելու է կառույցի քայքայմանը:

Այժմ մեծ ցանկություն կա նորոգելու և վերականգնելու Հերիեր գյուղի եկեղեցին: Սակայն ոչ մեկի մտքով անգամ չի անցնում նախագծման պատվերը տալ նախկին հեղինակներին, որոնց կողմից ժամանակին բավական մեծ աշխատանք է կատարվել հուշարձանի ուսումնասիրության և վերակազմության համար:

Չեզ են ներկայացնում Արցախի թեմի միջոցով իրականացվող Ննգի գյուղի Ս.Աստվածածին եկեղեցու նորոգման նախագծի վերաբերյալ իմ նկատառումները:

Եթե հաշվի առնենք, որ նախագիծը կատարվել է ոչ թե վերականգնող ճարտարապետի, այլ շինարար-կոնստրուկտորի կողմից, կարելի է և լռել: Բայց եթե հիշենք, որ մենք ուզում ենք պահպանել ոչ միայն մեր

եկեղեցիները, այլ նաև այն ավանդույթները և արվեստը, որ նրանք կրում են իրենց մեջ, պիտի խոսենք հետևյալ հարցերի մասին:

1. Չափագրություններ- նախագծում չեն երևում ինչպես եկեղեցու, այնպես էլ նրա բեկորների և մանրամասների չափագրությունները, որոնք հիմք պիտի ծառայեին վերականգնման հիմնավորված նախագծի համար: Պարզ չէ, թե նախագծվող քիվերը համապատասխան են գոյություն ունեցողին, թե նոր են նախագծվել:

2. Չանգակատուն - նախագծվել է նոր զանգակատուն, սակայն չի երևում այն համեմատական վերլուծությունը, որի հիման վրա դրվել է նոր զանգակատունը: Վերջինիս ձևը, համաչափությունները անհասկանալի են և չմեկնաբանված: Սկզբունքորեն սխալ է լուծված զանգակատան «գմբեթարդը»: Նման բրգածև ծածկով անալոգ հայ ճարտարապետության մեջ գոյություն չունի: Միայն են լուծված քարե ծածկասալերի ձևը, չափերը և միացման հանգույցները:

3. Ծածկերը - անհասկանալի է, թե ինչու լանջերը ծածկված են քիթեղով, այն էլ ցինկապատ (փայլվում), իսկ ռոտունդան (զանգակատունը) քարով: Չէ որ ցինկապատ քիթեղով ծածկված եկեղեցիներ Արցախի գյուղերում չեն եղել:

4. Սալահատակ - եկեղեցու սալահատակը իր մասշտաբով, ստեղծած կերպարով և տրամադրությամբ ոչ մի ընդհանուր բան չունի հայկական եկեղեցիների սալահատակների հետ: Նրա մասշտաբը հավասարեցված է սովորական սան.հանգույցների, լոգասենյակների և խոհանոցների հատակների մասշտաբին (300x300 մմ, կերամիկական սալիկների չափին):

Դիտելով նախագիծը, թվում է, թե հեղինակը ծանոթ չէ հայ ճարտարապետության ոչ պատմությանը, ոչ տեսությանը, և ոչ էլ գեղագիտությանը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանները պիտի ունենան մի տեղ, և դա պիտի լինի պետությունը: Միայն նա կարող է վերահսկել և կառավարել հուշարձանների հաշվառումը, պահպանումը, վերականգնումը և օգտագործումը: Նա պիտի հանդես գա որպես պատվիրատու բոլոր տեսակի աշխատանքների՝ կապված հուշարձանների հետ: Միայն պետությունը կարող է կրել ազգային մշակույթի ավանդույթների պահպանման ծանր և պատասխանատու բեռը, քանի որ հենց դրանք են հանդիսանում յուրաքանչյուր ազգի հոգևոր հենքի կողոնները: Եւ ոչ մեկը իրավունք չունի ոչնչացնել կամ խեղաթյուրել դարերից եկած ու մեր սերունդներին հասած, արյունով ու քրտինքով վաստակած ու պահպանված մեր ազգային ավանդույթները:

## ԱՐՅԱԽԻ ՄԱՆՐԱՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ


(Մամլել Կարապետյան,  
RAA երևանյան գրասենյակի պատասխանատու)



Հայաստանի տեղանունները հանդիսանում են հայ ժողովրդի պատմության անբաժան մասնիկները: Հին ու նոր տեղանունների հավաքագրմանը, ճշտմանն ու ստուգաբանմանն են նվիրվել բազմաթիվ աշխատություններ, որոնց թվում առավել ծանրակշիռը բուրովին վերջերս հինգերորդ հատորով ամբողջացված «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ն է:

Ցարդ, սակայն, գիտական շրջանակներն առավելապես կարևորել են խոշոր տեղանունները, ինչպես՝ բնակավայրերի, կարևոր լեռների, գետերի, լճերի, վարչատարածքային գա-

նազան միավորների, հնավայրերի և այլ անունները: Որպես կանոն ուշադրությունից դուրս են մնացել Հայկական լեռնաշխարհի մանրատեղանունները (միկրոտոպոնիմներ)՝ բնակավայրերն իրենց թաղամասերով, յուրաքանչյուր սար ու բլուր, գետ ու վտակ, աղբյուր ու ջրվեժ, հանդ ու արտ, մինչև անգամ մենավոր մի ծառ, որոնք ի տարբերություն խոշոր տեղանունների, ինչպես ցույց է տվել պատմությունը, կախված բնակչության տեղաշարժերից (բռնագաղթ, արտագաղթ, կոտորած), ավելի հաճախ են մոռացության մատնվել: 1915թ-ից հետո այդ ճակատագրին արժանացան պատմական Հայաստանի մեծագույն հատվածի՝ Արևմտահայաստանի բազմահազար մանրատեղանունները: Անշուշտ, դեռևս 1930-40-ական և առանձին դեպքերում նույնիսկ 1950-ական թվականներին սկզբունքորեն հնարավոր էր վերապրողների հուշերի միջոցով վերականգնել մանրատեղանունների որոշ մասը: Սակայն, այդ չանելու պատճառով կորուստն անխուսափելի դարձավ: Այժմ, պատմական դեպքերի բերումով, նույն ճակատագիրն ունենալու առջև է կանգնած 1988-1989թթ. ի վեր հայաբափ Հյուսիսային Արցախը: Արդեն 13-14 տարի է անցել այդ դեպքերից, և այդքան (քիչ ավել կամ պակաս) և նշված ուղղությամբ այլևս անելիք չենք ունենա: Առաջնորդվելով այս գործի կարևորության գիտակցումով, արդեն մի քանի տարի է ինչ ձեռնամուխ ենք եղել բռնագաղթված և Հայաստանում կամ ԼՂՀ-ում վերաբնակված հյուսիսային արցախցիներից իմանալու, հավաքագրելու և պատմության համար ապահովելու կորսված հայաշխարհի մանրատեղանունները:




հոգևոր տարբեր իշխանությունների (թեմերի, վանքերի, մելիքությունների և այլն) զբաղեցրած սահմանների վերաբերյալ: Մանրատեղանունների շնորհիվ հաճախ ճշտվում են վանքապատկան այս ու այն բնակավայրերի, հանդամասերի տեղադրությունները:

Ուրախ ենք հայտնելու, որ 2002թ. Հայ Օգնության ֆոնդը կարևորել է մեր այս ծրագիրը և արժանացրել շնորհի: Լիանույս ենք, որ ավելի քան 100 քարտեզներից բաղկացած և շուրջ 3000 տեղանուն ընդգրկող «Արցախի մանրատեղանուններ» աշխատությունն ամբողջացված կունենանք 2002թ. տարեվերջին:

# ՎԵՐԱՆՈՐՈՒՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԻ ՎԱՆՔՈՒՄ

(Արմեն Հախնազարյան,  
RAA հիմնադիր նախագահ)

Դադի վանքը գտնվում է Արցախի Վերին Խաչեն գավառում, Տրտու (Թարթառ) գետի ձախ ափից 500 մ վեր, Խոթ կամ Խութավան գյուղի եզրին (այժմ՝ ԼՂՀ, Քարվաճառի շրջան):




Դադի վանք. Գմբեթավոր փոքր եկեղեցին նորոգումից առաջ

Հիմնադրվել է առաջին դարում, քրիստոնեական քայազություն ծավալելու համար նահատակված Դադի (Թաղեոս առաքյալի աշակերտներից էր) գերեզմանի տեղում: Ճիշտ այս պատճառով էլ պատմական աղբյուրներում վանքը հաճախ կոչվում է Առաքելոց կամ Առաքելադի:

Ներկա վանքի տեղում, հավանաբար, նույնիսկ ավելի վաղ քան IV դարը, շինություններ են եղել, բայց պահպանված կառույցները վերաբերում են հետագա շրջաններին: Գրավոր աղբյուրներում վանքը հիշվում է միայն IX դարի դեպքերի առնչությամբ:

Տեղում մեծածավալ շինարարական աշխատանքներ իրականացվել են XII դարի վերջերից, բայց հատկապես XIII դարի ընթացքում: Որոշ նորոգություններ էլ կատարվել են XVII և XIX-XX դարերում:

Վանական համալիրը բաղկացած է 10 պաշտամունքային կառույցներից, որոնցից 4-ը՝ եկեղեցի, 6-ը՝ մատուռ և բազմաթիվ այլ շինություններից: Արցախյան ճարտարապետական դպրոցի հարազատ ու բնորոշ շենքերից են «Տաճարը» (1211թ.), Կաթողիկե եկեղեցին (1214թ.), Ժամատունը (1224թ.), զանգակատունը (1283թ.), միանավ եկեղեցին և զավիթը (1283-1293թթ.), սրահը և խուցերը, սեղանատունը և խոհա-



Գմբեթավոր փոքր եկեղեցին նորոգման ավարտին

նոցը (1211-ից հետո,) հյուրանոցը, հնձանը, մատանը, իշխանական ապարանքը և մատուռը (բոլորն էլ XIIIդ.), սյունաքարահիլ և գմբեթավոր փոքր եկեղեցին (XIII-XIVդդ.), շրջապարիսպը, դարպասները և այլ սենյակներ (XIII-XIVդդ.): Կառույցների հիմնական մասը մեզ են հասել կանգուն, բայց քայքայված, մինչև իսկ վթարային վիճակում:



Դադի վանք. Սյունաքարահիլ նորոգումից առաջ քյունները:

Դադի վանքի ամբողջական համալիրը հայկական ճարտարապետության կարևորագույն նմուշներից է և ունի ապագայում գործող դառնալու բոլոր հնարավորությունները:

Տարածքի ազատագրումից հետո, ինչպես պարզվեց, վանքի բազմաթիվ շինություններից մի քանիսը թեև կանգուն, սակայն քայքայված վիճակում էին, որոշները մինչև իսկ վթարային: 1993-1996թթ. ընթացքում շատ անգամներ ականատես եղանք մի քանի շինությունների փլուզումներին (առաջնորդարան, սեղանատուն, գրատանը հարող միաբանության սենյակներ), որոնք արդյունք էին ծայրահեղ քայքայված վիճակի: Ստեղծված կացությունը հուշարձանախմբի որոշ շինությունների վերաբերմամբ պարտադրում էր ձեռնարկել վերականգնողական հրատապ աշխատանքներ: Իրավիճակի թելադրանքով, որպես առաջին միավոր, վերականգնելու առաջնահերթությունը տրվեց գմբեթավոր փոքր եկեղեցուն, որին ըստ էության, կանգուն վիճակում մնալու հաշված տարիներ էին մնացել: Այս աշխատանքները 1998թ. ի վեր ստանձնեց «Հայկական ճարտարապետությունն ուղղմանախոր» (RAA) հասարակական կազմակերպությունը:

1998թ. ընթացքում տեղում չափազորվեց գմբեթավոր փոքր եկեղեցին և կազմվեց վերականգնման նախագիծը, հեռացվեցին եկեղեցու շուրջ կուտակված հողն ու քարերը, իրականացվեցին ջրահեռացման աշխատանքներ: Թաղերի բուսածածկ հողի շերտը հեռացնելուց հետո հայտնաբերվեցին կղմինդրածածկի մնացորդները: Դրանցից մի քանիսը, որոնք անվնաս լինելով գործածելի էին, օգտագործվեցին որպես մնամատիլ ձևերը թրծելու նմուշ: Վերականգնվեց եկեղեցու արևմտյան ճակատը: Պարզ դարձավ եկեղեցու գմբեթառանկ քարադուխտ շարվածքումնեցող ծայրահեղորեն վնասված կամարների վերականգնման բարդությունը: Տարվա ընթացքում կատարված վերականգնման աշխատանքների հովանավորին էր Մեսրոպ արքեպիսկոպոսը:

8238

04 № 11 2018

Նորոգվող եկեղեցու ամրությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր կիրառել այն շինանյութերը, որոնք ժամանակին գործածվել էին այդ շենքում: Գմբեթավոր փոքր եկեղեցու երկաթ-բետոնային նախագիծն ընդունելի չէր, ուստի պատրաստվեց քար-կիր-աղյուսե նախագիծ, որը քննարկումներից հետո հաստատվեց և ամռան ամիսներին գործադրվեց: 1999թ. հունիսին ձեռք բերվեցին անհրաժեշտ շինանյութերը (աղյուս, կիր, փայտ) և փոխադրվեցին Դաղի վանք: Օգոստոսին պատրաստվեցին եկեղեցու արևմտյան և արևելյան թաղերը պահող կաղապարները: Արևմտյան աղյուսե թաղը և առագաստը հեռացվեցին: Վերականգնվեցին արևմտյան թաղն ու առագաստը: Մեպտեմբերին կապվեց հարավային կողմի փայտամածը և վերականգնվեց հարավային թաղն ու նույն կողմի ճակատը: Հոկտեմբերին կապվեցին հարավային և արևելյան ճակատների փայտամածները, ամբողջությամբ վերականգնվեցին արևելյան ու հյուսիսային ճակատները: Նոյեմբերին Քարվաճառից փոխադրվեցին եկեղեցու հատակի սալապատման նպատակով անհրաժեշտ քարերը: Ամբողջացավ խորանի վերականգնումը:



*Սյունասրահի նորոգման ընթացքում*

1999թ. իրականացված աշխատանքների հովանավորներն էին Գերմանիայի Բիլեֆելդ քաղաքում բնակվող Քարին ու Գուստավ Ուփմայեր ամուսինները և բոստոնաբնակ Ջոն Վարդանը:

2000թ. ընթացքում նորոգվեցին համալիրի արևմտյան մասում գտնվող թաղածածկ խցերը: Դրանք շինարարների համար ժամանակավորապես ծառայեցին որպես բնակարան: Կղմինդրապատվեց եկեղեցու հարավային թաղը: Վերաշարվեց գմբեթի քիվը, իսկ կորած քիվաքարերը լրացվեցին նոր տաշվածներով: Կղմինդրածածկով ամբողջությամբ վերականգնվեց վեղարը: Ներսում հեռացվեց պատերի քայքայված և սևացած սվաղի շերտը և այն պատվեց նոր սվաղով:

Հաշվի առնելով սյունասրահի անմխիթար վիճակը, տարվա ընթացքում ձեռնարկվեցին նաև վերջինիս ամրացման աշխատանքները: Թաղի ավելորդ ճնշումը վերացնելու նպատակով հեռացվեց տանիքում կուտակված հողի հաստ շերտը:

2000թ. իրականացված աշխատանքների մեկենասներ էին լուսանջեղեսաբնակ Շահեն և Մարթա Հարությունյանները:

2001թ. եկեղեցու վերականգնման աշխատանքները տեխնիկական

պատճառներով հետաձգվեցին մինչև 2002թ. գարուն:

Ուրախ ենք հայտնելու, որ Դաղի վանքի Կաթողիկե եկեղեցու վերականգնման աշխատանքների մեկենասությունը ստանձնել է ԱՄՆ-ի Նյու-Յորք քաղաքում բնակվող Էդիլ Հովհաննիսյանը:

ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության Գիտխորհրդի 14.12.2001թ. նիստում հաստատվեց Կաթողիկե եկեղեցու վերականգնման նախագիծը: Նախագծի հեղինակ ճարտարապետ Սամվել Այվազյանը կազմակերպության կողմից վերահասու է լինելու եկեղեցու վերականգնման աշխատանքներին, որոնք կսկսվեն 2002թ. գարնանը:

Դաղի վանքի վերանորոգման գործում մեծ է Արցախի թեմակալ առաջնորդի՝ Արքեպիսկոպոս Պարզև Սրբազանի հովանավորությունը:

# 1. ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԿԵՂԵՅՈՒ ՆԿԱՏԱՄԲ ԼԵՆԻՆ-ՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## 2. ԱՐՅԱԽԸ ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԳԱՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(Վահրամ Բալայան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ)



11-րդ կարմիր բանակի ճնշման տակ, համաշխարհային հեղափոխության մոլորքով տարված, հայ բուլշևիկների ջանքերով Լենինային Ղարաբաղում 1920թ. մայիսին հաստատվեցին խորհրդային կարգեր: Երկրամասի հայությունն իր գալիք ապագան միամտորեն կապեց նոր կարգերի հետ և հոգու ջերմությունն ու աշխատանքային ավյունը անմնացորդ նվիրաբերեց խորհրդային կարգերի ամրապնդմանը:

Արցախահայության այն հույսը, թե խորհրդային կարգերի հաստատումը կնպաստի մայր հայրենիքի հետ Արցախի միացմանը, շուտով հոդս ցնդեց և միանգամայն պարզ դարձավ, որ 11-րդ կարմիր բանակը երկրամասը բռնազավթել է հոգուտ Խորհրդային Ադրբեջանի:

Տիրելով Արցախին, 11-րդ կարմիր բանակը 1920թ. հունիսին ժամանակավորապես նվաճեց նաև Չանգեզուրի մի մասը:

Գարեգին Նժդեհի ազատագրական բանակի հարվածների տակ 11-րդ կարմիր բանակը ստիպված հանգրվանեց Արցախում: Անպատժելիության մեղադրանքով Արցախում լայն ծավալ ստացան բռնություններն ու ավան-թալանը: 1920թ. նոյեմբերի 30-ին Գարեգին Նժդեհը 11-րդ բանակի հրամանատարներից մեկին՝ Սեմյոնովին գրած նամակում, մերկացնում է կարմիր բանակի հակահայկական, հակաժողովրդական գործունեությունը: Նա փաստերով ցույց է տալիս, թե հուլիսից մինչև նոյեմբերի վերջը այդ «ազատարարները» Ադրբեջանի և բուլշևիկների պահանջով ինչպիսի անմարդկային արարքներ են կատարել Սյունիքում և Արցախում՝ թալանելով, առանց այն էլ կարիքի մեջ գտնվող Ղարաբաղը և Չանգեզուրը: Նժդեհը կարմիրների պարտության պատճառները համարում է նրանց քաղաքական անհամբերությունն ու աղանդավորությունը<sup>1</sup>:

1 Արևոտ գիրք, Գորիս, 1921, էջ 78-84:

Հարկ է նշել, որ ի տարբերություն Խորհրդային Հայաստանի, Լենինային Ղարաբաղում բուլշևիկները եկեղեցու և հոգևորականության նկատմամբ ավելի անսանձ ու կամայական քաղաքականություն էին վարում: Եթե Խորհրդային Հայաստանում եկեղեցին դիտվում էր որպես նոր կարգերին ընդդիմադիր ուժ, ապա Ղարաբաղում, միաժամանակ, համարվում էր հակաադրբեջանական շարժման ոգեշնչողն ու կազմակերպիչը: Պատահական չէր, որ 1920թ. ամռանը մի խումբ ձերբակալված հայրենասերների շարքում կային նաև հոգևորականներ: Արմենակ Ղարազյոզյանի հրամանով ձերբակալվեցին Տեր-Մեսրոպ Շահնազարյանը, Դավի Մահրասան, Բեգլար Միրումյանը, Կարապետ Ասլանյանը, կապիտան Արամյանը և ուրիշներ, որոնց տարան Թարթառ՝ հանձնեցին բուրք դահլիճներին, որոնք էլ բոլորին կացնահարեցին<sup>2</sup>:

Պաշտոնապես ճանաչելով եկեղեցու անկախությունը, պետությունն իրականում միջամտում էր նրա գործերին, փորձելով ժողովրդին հակադրել հոգևորականությանը:

Ժողովրդի քաղաքական լուսավորական աշխատանքների մեջ հատուկ տեղ էր գրավում հակակրոնական ագիտացիան և պրոպագանդան:

Բուլշևիկ ղեկավարները բռնադատելով եռանդով ձեռնամուխ էին լինում աթեիստական դաստիարակությանը: Տեղական իշխանության մարմինները գյուղերում կազմակերպում էին հրապարակային դասախոսություններ, հրավիրում էին այսպես կոչված մասնագետ աթեիստների, որոնք իրենց հայեցակետով բացատրում էին կրոնի ծագման, կրոնական տոնակատարությունների առաջացման պատճառները:

Գյուղական խորհուրդները և կուսակցական բջիջները խրճիթ-ընթերցարաններին կից կազմակերպում էին բնագետների և անաստվածների խմբակներ, որոնցում պարտադիր կերպով ընդգրկում էին ողջ շափահաս բնակչությանը: 1928թ. մարգում կար 63 անաստվածների միություն և 58 հակակրոնական խմբակ<sup>3</sup>:

Ստալինյան բռնությունների սաստկացման պայմաններում «անաստվածների խմբակները» վերափոխվեցին «Մարտնչող անաստվածների միության»:

Մարգում հավատացյալ ժողովրդի դարերից եկած ավանդույթները շահարկելով՝ կազմակերպում էին հասարակական կարմիր կնուռ կամ ինչպես արձագանքել է ժամանակի մամուլը՝ մի շարք ընտանիքներ իրենց նորածին երեխաներին դնում էին կոմերիտ բջիջի քարտուղարի ձեռքին և «հոկտեմբերացուն» էին կատարում, այսինքն՝ վերջինս պար-

2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց. 1, գ. 141, ք. 184-185:

3 ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 250, ց. 1, գ. 2, ք. 1:

տավորվում էր սրան դաստիարակել կոմունիստական ոգով 4:

Նմանօրինակ մարդկանց ճնշման տակ տասնյակ քահանաներ հրաժարվում էին իրենց պաշտոնից և փորձում այլ բնագավառներում օգտավետ լինել ժողովրդին: Սակայն ուսյալ այս խավը բնութագրապես տեղ չուներ, որովհետև նրանք համարվում էին խորհրդային կարգերին խորք տարրեր և ամենուր հարցերը լուծվում էին բողջկիկյան սոցիալ-դասակարգային սկզբունքով ու մոտեցումով և հիմնականում ասպարեզը տրված էր չքավոր գյուղացիների ներկայացուցիչներին:

1927թ. Ղարաբաղում 15 քահանաներ դարձել էին ուսուցիչներ, սակայն նրանց խորք աչքով էին նայում, որովհետև գտնում էին, որ նրանք հրաժարվել են քահանայությունից, փարաջայից ու միլությունից և ո՛չ քահանայական հայացքներից 5:

Եկեղեցու նկատմամբ բացահայտ բռնությունները նոր քափ առան 1929 թվականից, երբ «համատարած կոլեկտիվացման» պատճառով խիստ սրվել էր տնտեսական և քաղաքական իրադրությունը: Համատարած հարձակում կատարվեց եկեղեցու և վանքերի հարստությունների վրա: Նրանց անշարժ գույքը, կալվածքները բռնագրավելուց հետո՝ կողոպտվեցին մյուս հարստությունները: Դեռ ավելին, կարճամիտ որս ղեկավարներ բնակչության աքեիստական դաստիարակության լավագույն միջոց էին դարձրել եկեղեցիների հիմնահատակ կործանումն ու եղած գույքի ցարքցրիվ անելը: Նման տխուր բախտի արժանացան Արցախի հարյուրավոր եկեղեցիներ, վանական համալիրներ, որոնք դիմանալով միջնադարյան մղձավանջային ժամանակներին, ավերվեցին լուսավորյալ 20-րդ դարում:

1929թ. փետրվարի 21-ին Ադրբեջանի մինիստրների խորհրդի որոշման հիման վրա մարզկոմը 108 եկեղեցիներ փակել և դրանք վեր է ածել կոլտուր-լուսավորական հիմնարկությունների 6:

1929թ. հոկտեմբերի 4-ին մարզգործկոմի որոշմամբ փակվեց Ամարասի հռչակավոր եկեղեցին, իսկ պատմամշակութային արժեքներն ու դարկվեցին Բաքու՝ ուսումնասիրելու համար: Հիշեցնենք, որ առայսօր այդ սրբությունները «ուսումնասիրվում են» Բաքվում և Ադրբեջանի վալ-գիտնականների թեթև ձեռքով համարվում են աղվանական, երբեմն էլ հանգամանքների բերումով, դարձնում իրենց թուրք նախնիների ստեղծածը, իսկ Ամարասը անվանում Աղ օղլան:

Փաստորեն, խորհրդային իշխանությունը՝ հիմնովին կործանելով Արցախում դարեր շարունակ ստեղծված ու մաքրագործված Հայ Առա-

քելական եկեղեցու բնականոն գործող համակարգը, արցախահայությանը զրկեց ոչ միայն հասարակ մարդուն տրված հավատքից, այլ նաև ինքնություն պահպանման ամենահիմնական հենասյուներից:

**2** Մ.թ.ա. 7-րդ դարի վերջերին Առաջավոր Ասիայում կատարվեցին նոր տեղաշարժեր, որոնք իրենց անդրադարձները ունեցան Հայկական լեռնաշխարհի քաղաքական կացության վրա:

Աննախընթաց վերելքի ուղին բռնեց Մարաստանը: Մյուս կողմից էլ Ռիրարտուն ապրում էր ներքին խռովահույզ ժամանակաշրջան: Օրեցօր իրենց զգացնել են տալիս կենտրոնախույս ուժերը: Արմեն-Շուրբիայի կառավարիչ Պարույր Սկայորդին, չենթարկվելով Ռիրարտունի կենտրոնական իշխանությանը, իր ձեռքի տակ է միավորում լեռնաշխարհի ողջ արևմտյան մասը՝ Վանա լճից մինչև Եփրատ: Այդ ժամանակ Մարաստանը և Բաբելոնը դաշինք էին կազմել ընդդեմ Ասորեստանի: Նրանց միանում է Պարույրը՝ հայկական գորքերով: Դաշնակիցների հարվածների տակ մ.թ.ա. 612թ. կործանվեց երբեմնի հզոր Ասորեստանի մայրաքաղաք Նինվե, իսկ մ.թ.ա. 580-ական թվականներին՝ Վանի թագավորությունը: Մարաստանի Կիսքսար թագավորը իրեն մատուցած ծառայության դիմաց Պարույրին ճանաչեց իբրև Հայոց թագավոր:

Այսպիսով, Հայաստանում հիմնվում է նոր թագավորական դինաստիա, որը Պարույր արքայի ազգական և իրավահաջորդ Երվանդ Սակավակյացի անունից ստացավ «Երվանդունյաց» կամ «Երվանդական» անունը (մ.թ.ա. 580-ական-201թթ.):

Երվանդունիները իրենց գահակալության առաջին իսկ տարիներից ուշադրության կենտրոնում էին պահում Արարատյան դաշտավայրը, որը շուտով դառնում է հայ ժողովրդի տնտեսական-քաղաքական և մշակութային կյանքի կենտրոնը:

Հայոց արևելյան նահանգների հայությունն աշխարհագրական տեսակետից առավել մոտ լինելով նոր թագավորական տան կենտրոնատեղիին, ավելի գործուն մասնակցություն ունեցավ պետականության կերտմանը:

Նոր կազմավորված հայկական թագավորությունը ստիպված էր դիմակայել երեկվա իր դաշնակցին՝ Մարաստանին: Վերջինս, տիրելով Արաքսի հովտում և Միջագետքում գտնված հաղորդակցության ուղիներին, փորձում էր իր գերիշխանությունը տարածել նաև Հայաստանի վրա: Մարաստանի Աստիագես կամ առասպելական Աժդահակ թագավորի դեմ պայքարը գլխավորեցին Երվանդ Սակավակյացը և նրա որդի Տիգրանը: Հայոց թագավորը գորք է ժողովում Հայաստանի տարբեր նահանգներից, այդ թվում Արցախից և Ռոտիքից ու հասնում հաջողու-

4 «Կոմունիստ», 7սեպտեմբերի, 1924:

5 «Կոմունիստ», 21 հունվարի, 1924:

6 ԼՂՀ պետարխիվ, ֆ.1, ց.2, գ.3, ք.63:

թյան<sup>1</sup>: Այդ պայքարում հայերին աջակցում են պարսից Աքեմենյանները՝ Կյուրոս Մեծի գլխավորությամբ, որոնք ապստամբել էին Մարաստանի դեմ: Տիգրան Ա-ի օժանդակությամբ Կյուրոսը մ.թ.ա. 550 թվականին տեղի ունեցավ Աքեմենյան պարսկական տերությունը: Արցախը մ.թ.ա. 550 թվականից մինչև 331 թվականը գտնվում էր Աքեմենյան գերիշխանության տակ<sup>2</sup>:

Տիգրան Ա Երվանդյանի գահակալության շրջանում Հայաստանը ենթարկվեց սկյութական հարձակումների: Չնայած Հայոց թագավորը նրանց նկատմամբ հաղթանակի հասավ, բայց և այնպես ժամանակի ընթացքում սկյութներին հաջողվեց բնակություն հաստատել Կուրի աջափնյակում՝ Գանձակի գավառում, որը անվանվեց Շակաշեն: Էթնիկ բախումների հետևանքով նշված տարածքներից հայ բնակչության մի հատվածը տեղափոխվեց Կուրի ձախ ափը<sup>3</sup> և մինչև Արցախյան շարժման սկիզբը ապրում էր այնտեղ:

Մ.թ.ա. 4-րդ դարում Աքեմենյան տերությունը բռնել էր քայքայման ուղին: Նրա անկումն արագացրեց Բալկանյան թերակղզու հյուսիսում գտնվող Մակեդոնիայի արքա Ալեքսանդր Մեծի ձեռնարկած արշավանքը:

Մ.թ.ա. 331թ. Գավգամելա վայրում Ալեքսանդրը հաղթանակ է տանում Աքեմենյանների նկատմամբ և վերջ դնում երբեմնի հզոր կայսրությանը: Մեծ Հայքի սատրապ Երվանդը, օգտվելով առիթից, իրեն հռչակեց անկախ կառավարիչ: Հայաստանն, այսպիսով, վերականգնվում է որպես ինքնուրույն թագավորություն: Հայկական անկախ պետականության վերականգնումը այդպիսով էր նաև Հայաստանի հասարակության ներքին զարգացման, նրա հասունացման, հայոց բոլոր նահանգների միակամության, իշխանության նոր, ավելի բարդ ձևեր ստեղծելու ունակության:

Հայկական թագավորության սահմանների մասին որոշ տեղեկություններ են պահպանվել: Ինչպես երևում է Քսենոփոնի «Կյուրոսյեղիայի» որոշակի տվյալներից, Հայաստանի և Ատրպատականի սահմանը անցնում էր Արաքսի միջին հոսանքի շրջանից Ուրմիա և Վանա լճերի միջով մինչև Ջերմ գետի (Բոհտան սու) ակունքների շրջանը: Ջերմ գետով հարավային սահմանը ձգվում էր դեպի արևմուտք և շարունակվում Արևմտյան Տիգրիսով կամ Մասիս(Տուր-արդի) լեռնաշղթայով մինչև Եփրատ: Հայաստանի արևմտյան սահմանի մի մասը պետք է անցած լինի Ամանոսի լեռներով և Կոմմագենե երկրի արևմտյան եզ-

1 Մակ Բարխուտարեանց, Պատմություն Աղուանից, հ.Ա, Վաղարշապատ, 1902, էջ 41:

2 Нагорный Карабах, Историческая справка, Ер., 1988, էջ 10:

3 Մակ Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 22:

րով: Եփրատ գետից սահմանը անցնում էր Եկեղիքի հարավային մասով: Արևմտյան Եփրատից դեպի արևմուտք և հյուսիս գտնվում էր Փոքր Հայքը՝ մինչև Կապադովկիա և Պոնտական լեռները: Եփրատի վերին հոսանքից հյուսիսային սահմանը ընթանում էր դեպի արևելք, հավանաբար՝ Շարխալով. իր մեջ ամփոփելով արդեն փասիանների և հեսպերիտների, ինչպես նաև տառխների երկրները: Հայկական պետության հյուսիս-արևելյան սահմանը Կուր գետն էր: Արևելյան Այսրկովկասի այդ ժամանակաշրջանի պատմության տվյալներից երևում է, որ Կուր գետից արևելք ձգվող տարածությունները, որտեղ բնակվում էին աղվանական բազմաթիվ ցեղեր, գտնվում էին մարական սատրապության և ապա Ատրպատականի պետության հսկողության տակ<sup>4</sup>:

Փաստերը վկայում են, որ Երվանդունյաց պետության կազմի մեջ մտնում էին նաև Արցախը և Ուտիքը:

Մ.թ.ա. 4-3-րդ դարերում հայոց արքունական տան կալվածներն ու ձմեռանոցն Ուտիք նահանգում էր<sup>5</sup>:

Պատահական չէր, որ մ.թ.ա. 2-րդ դարում Արտաշեսի և Երվանդի միջև թեժ պայքարը նոր ընթացք ստացավ Ուտիքում: Խորենացին վկայում է, որ Երվանդը Ուտիքում էր, երբ լուր ստացավ, թե Արտաշեսի դստակ Սմբատը պարսիկների հետ դաշնակցած մեծաքանակ զորքերով խորանում է Հայոց նահանգներում: Երվանդը այդ նահանգում թողնելով կողմնապահներ, ինքը տեղափոխվում է խոր թիկունք՝ Արարատյան դաշտավայր, իր շուրջը համախմբելով դաշնակիցներին:

Արտաշեսը, մտնելով Ուտիք, նրան են միանում հայ նախարարները և համատեղ ուժերով Սևանա լճի ափերով հասնում Երվանդի բանակին: Ճակատամարտում պարտության մատնելով Երվանդին, մ.թ.ա. 201թվականին Արտաշեսը գրավում է Երվանդաշատ մայրաքաղաքը և իրեն հռչակում Մեծ Հայքի կառավարիչ<sup>6</sup>: Նույնը կատարեց Չարեհր Շոփքում: Բիչ անց մ.թ.ա. 189թվականին Արտաշեսը, օգտվելով արտաքին բարենպաստ հանգամանքներից, իրեն հռչակեց անկախ Մեծ Հայքի թագավոր:

Լինելով Երվանդունյաց տոհմի շառավիղներից մեկը, նա այնքան մեծազորություններ կատարեց և խոր հետք թողեց Հայոց կենսագրության մեջ, որ ընդունված է նոր պետությունը անվանել Արտաշեսյան (մ.թ.ա. 189-մ.թ. 1թ.):

Հույն պատմագիր և աշխարհագիր Ստրաբոնը վկայում է, որ հայկական պետությունը Արտաշեսի օրոք ընդարձակվել է բոլոր չորս ուղ-

4 ՀժՊ, հ.1, Եր., 1971, էջ 508:

5 Խ.Բարխուտարյան, Դերբենդի հայ- աղվանական թագավորությունը, ՊԲՀ, ՈՅ 3, Եր., 1969, էջ 134:

6 Մ.Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1961, էջ 190-191:

դուքյուններով: Դեպի արևելք կատարված արշավանքների հետևանքով ձեռք բերված երեք երկրամասերից՝ Կասպիանեն, Փավնիտիս, Բոսորայեդիս. վերջինն համընկնում է Պարսպատունիք գավառին, երկրորդի տեղը պարզ չէ, իսկ առաջինը՝ Կասպիանեն, Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջանն է և նրանից արևելք, մինչև Կասպից ծովն ընկած երկիրը, որը նույնանուն է Փայտակարանի հետ<sup>7</sup>: Մ.Խորենացին այն անվանում է Կասբից երկիր<sup>8</sup> և, հենվելով Օղյունայ քրմի պատմածի վրա, մանրամասնություններ հաղորդում Արտաշեսի՝ դեպի այդ կողմ կատարած արշավանքի մասին<sup>9</sup>: Մ.Խորենացու հաղորդմամբ, այդ երկիրը նախապես էլ Հայաստանի իշխանության տակ է եղել և Արտաշեսի օրոք ապստամբել է: Արտաշեսը գուրք է ուղարկում գուրավար Մմբատի ղեկավարությամբ, որը ճնշում է ապստամբությունը և գերեվարում երկրի թագավոր Չարդանոսին ու բնակչության մեծ զանգվածներ: Այն հանգամանքը, որ այստեղ Կասբից երկիրը (Ստրաբոնի Կասպիանեն) դիտվում է որպես հայկական պետության ապստամբած մաս և ոչ նվաճվող երկիր, թերևս արտացոլում է այն իրողության, որ հայկական էթնոսը արդեն նախապես տարածված էր այս երկրամասում: Ռևստի և նրա քաղաքական միավորումը հայկական պետության հետ կարող էր ընկալվել որպես վերամիավորում:

Պատահական չէ, որ Ստրաբոնը, խոսելով Արցախի մասին, պատմում է, որ այն չի սահմանակցվում հարևան երկրների հետ և գտնվում է Մեծ Հայքի խորքում: Ըստ Ստրաբոնի՝ Արցախը (Օրիսիստինան) այդ ժամանակ արտահանում էր մեծաքանակ պատերազմական ձիեր<sup>10</sup>: Ստրաբոնը մ.թ.ա. 1-ին դարի և մ.թ. արշալույսի Հայաստանը նկարագրելով որպես ակնատես, նրա կազմի մեջ ներկայացրել է Շակաշեն-Ուտիքը և Օրիսիստինա-Արցախը՝ որպես այդ երկրի բուն նահանգներ: «Կիրը (Կուր),- գրել է նա,- սկիզբ է առնում Հայաստանում, նեղ գետահովտով հոսում է դեպի Ալբանիան՝ Առատաջուր և հախտուն անցնելով նրա և Հայաստանի միջով»<sup>11</sup>:

Ստրաբոնի հաղորդած տեղեկությունները հնարավորություն են տալիս որոշելու պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանները: Հյուսիսում գտնում է, որ Հայաստանն Արտաշեսի օրոք իր մեջ բովանդակում էր Փայտակարանը, Սյունիքը, Վասպուրականը, Այրա-

7 Մ.Երևնյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 57:

8 Մ.Խորենացի, էջ 199:

9 Գ.Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության մի քանի տվյալներ Հայաստանի մ.թ.ա. 3-4-րդ դարերի պատմության մասին», Բ.Մ., 1962, № 6, էջ 8:

10 Страбон, География, М., 1964, XI, XIV, 5.

11 Ստրաբոն, XI, III, 2:

րատը, Գուգարքը, Տայքը, Բարձր Հայքը, Տուրուբերանը, Չորրորդ Հայքը, Աղձնիքը, Սոկքը, Կորճայքի մի մասը, ՌԻտին ու Արցախը, այսինքն՝ հնագույն Հայաստանի 15 նահանգներից 13-ը<sup>12</sup>: Հույն պատմիչը վկայում է, որ մ.թ.ա. 2-րդ դարում Հայաստանի բնակչությունը միավեցու էր<sup>13</sup>, այսինքն՝ հայալեզու:

Ստրաբոնի վկայությունները հաստատվում են Մովսես Խորենացու տեղեկություններով: Պատմահայրն ասում է՝ Վաղարշակ ավանդական արքայի (Արտաշեսի) օրոք Հայոց պետության սահմանները զովեցին «գեգերը հայկական խօսիցս», այսինքն՝ հայոց լեզվի տարածման սահմաններով: Շարունակելով իր միտքը, Մ.Խորենացին հաղորդում է, թե ինչպես Վաղարշակ-Արտաշեսը կարգավորում է իր արքունիքը, ստեղծում գործակալություններ, նահանգներում նշանակում կառավարիչներ: Արտաշեսը Հայկի սերնդից Առանին կարգեց Կուրի և Արաքսի միջազգետքի, այսինքն՝ Արցախի և Ուտիքի կուսակալ: «Աշխարհն էլ Աղվանք կոչվեց,- գրում է պատմահայրը,- նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետև նրան աղոյ էին ասում»<sup>14</sup>:

Լեոն, խոսելով հայոց պետականության գոյության համար վերոհիշյալ գավառների ռազմավարական նշանակության մասին, գրել է. «...առանց Գարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի՝ այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսստանի սրտի՝ այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսստանի և արևելյան տափաստաններից, Գարաբաղը անմիջական շարունակությունն է այն հզոր պաշտպանողական պատվարի, որ ներկայացնում է Գուգարքը (այժմյան Լոռին և հարակից գավառները): Եվ այս է պատճառը, որ հայկական պետության հիմնադիրներ հանդիսացած Արտաշեսն ու Տիգրանը Գուգարքի հետ միասին Հայաստանի սահմանների մեջ են մտցրել և ՌԻտին, Արցախն ու Սյունիքը»<sup>15</sup>: «Արտաշեսի սերնդից էր,- ասում է Ստրաբոնը,- Տիգրանը. նա իշխում էր բուն Արմենիայում, որը սահմանակից էր Մարաստանին, Աղվանքին, Իբերիային մինչև Կողքիս և Սև ծովի մոտ գտնվող Կասպադովկիային»<sup>16</sup>: Տիգրան Բ Մեծը, շարունակելով իր պայլի՝ Արտաշես Ա-ի կիսատ թողած գործը, առավել ընդարձակեց տերության սահմանները՝ ստեղծելով ծովից ծով Հայաստան: Նա ոչ միայն ամրապնդեց իր նախորդների ստեղծած միասնական հայկական պետությունը, այլև նրա քաղաքական ազդեցության տակ առավ հարևան երկրները: «Հայաստան աշխարհագրա-

12 Հ.Հյուրջյան, Հին հայոց տեղոյ անունները, քարգմ. Հ.Պիլեգիկճյանի, Վիեննա, 1907, Ազգ-մատ. ԾԳ, էջ 22-23:

13 Ստրաբոն, XI, XIV, 5:

14 Մ.Խորենացի, էջ 154:

15 Լեոն, հ.3, Եր., 1973, էջ 10-11:

16 Ստրաբոն, XI, XIV, 15:

կան գաղափարը,- ասում է Հյուբշմանը,- հաստատուն կերպով զարգացավ Տիգրանի ժամանակ, որն առաջին անգամ Հայաստանին միացրեց Ճոփքն ու Կորդուքը: Հաջորդ դարերին այս գաղափարը տիրող մնաց հայերի մոտ, քե՛ն քաղաքական հարաբերությունները միշտ նույն գաղափարին չէին համապատասխանում: Եթե հարավային նահանգները պարսիկներին էին անցնում, արևմտյանը՝ հույներին, հյուսիսայինները՝ վրացիներին կամ աղվաններին, և եթե հռոմայեցիներն ու պարսիկները երկիրը իրենց մեջ էին բաժանում՝ Հայաստանը հայերի համար միշտ այն երկիրն էր համարվում, որը- հին բացատրությամբ- իր սահմաններն ուներ հարավից Մասիս լեռը (ի նկատի ունի Տավրոսը, որ Հայաստանը բաժանում էր Միջագետքից, Ստրաբոն), արևելքից՝ Ատրպատականն ու Մեդիան, հյուսիսից՝ Կասպից ծովի կողմերը գտնվող Պարսքոսթրյան լեռները՝ Վրաստանը, Աղվանքը և Կովկասը՝ Մոսքյան և Կողքիսյան լեռներով, արևմուտքից՝ Պարխարը և Սկյուդիսեսը, Փոքր Հայքն ու Եփրատ-կո(որը Հայաստանը բաժանում էր Կասպադովկիսից և Կոմմագենից)»<sup>17</sup>:

Լայնածավալ տերությունը ներքաշվեց հելլենիստական մշակույթի ոլորտը, որի բնորոշ գծերից մեկը քաղաքաշինությունն էր: Տիգրան Բ Մեծը բուն Հայաստանում կառուցեց չորս քաղաքներ և նրանք կոչեց իր անունով՝ Տիգրանակերտ: Դրանցից մեկը գտնվում է Արցախում՝ Աղդամից ոչ շատ հեռու և որի հիմքերը առ այսօր պահպանվում են:

Տիգրան Բ Մեծը, ունենալով հզոր բանակ, անխաթար էր պահում երկրի սահմանները: Մ.Խորենացին պատմում է, որ երբ Տիգրանը գտնվում էր տերության հարավային սահմաններում, լսում է, «թե Վայկուն անունով մի երուզակ վրդովում է Հայոց աշխարհը, գրավելով այն ամուր լեռը, որ մինչև այսօր էլ այդ երուզակի անունով կոչվում էր Վայկունիք»<sup>18</sup>: Ամենայն հավանականությամբ, պատմահոր ներկայացրած Վայկունիքը, Արցախի Վայկունիք-Քարավաճառ գավառն է:

Ցավոք, հայ և օտար աղբյուրները Հայաստանի սահմանների, երկրի ու նրա բնակչության ազգագրական վիճակի մասին ամենայն մանրամասնությամբ խոսելով հանդերձ, շատ քիչ տեղեկություններ են հաղորդում Երվանդունիների և Արտաշեսյանների ժամանակ Հայոց արևելից նահանգների ժողովրդի ներքին կյանքի, նրա մշակույթի և նիստ ու կացի մասին:

## ՎԱՆԴԱԼԻՉՄ

**Աղբրեջանում հայկական-քրիստոնեական մշակութային ժառանգության յուրացման, ոչնչացման եւ հարակից այլ խարդավանքների մասին**

*(Շահեն Մկրտչյան, հուշարձանագետ)*



Արցախը Հայաստան երկրի հնագույն եւ կենսունակ մարզերի քվում այն եզակիներից է, որ կարողացել է պահել-պահպանել իր ամբողջականությունը, որոշ ընդհատումներով նաեւ քաղաքական անկախությունը: Միաժամանակ նա հանդիսացել է ազգային ազատագրական պայքարի հզոր պատվարը, հույսերի կղզի, վերածննդի խորհրդանիշ: Այստեղ՝ Փոքր Կովկասի անմատչելի, անտառապատ լեռներում հայ ժողովուրդը դիմակայել է նաեւ Արեւելից խուժած քոչվոր ցեղերի ասպատակություններին՝ պահպանելով իր տեղական ինքնավարությունը, ազգային դեմքը, մշակույթը, սրբավայրերը:

Արցախ-Ղարաբաղը հարուստ է պատմական անցյալի եւ տարբեր դարաշրջանների տարաբնույթ պատմամշակութային հուշարձաններով: Դրա պերճախոս վկայություններից են նաեւ ոչ մեծ երկրամասում արձանագրված ավելի քան 20 հազար պատմաճարտարապետական, հայկական-քրիստոնեական հուշարձանները, որոնց զգալի մասը կառուցվել է վաղ, միջին եւ ուշ միջնադարում եւ բացառիկ դեր է խաղացել հայ ժողովրդի արցախյան հատվածի պատմական ճակատագրում: Սա, հիրավի, ոչ միայն հսկայական հարստություն է, այլեւ անսպառ հպարտության աղբյուր: Վանքային համալիրներում, նշանավոր եկեղեցիներում, անգամ խավարի ու մոծավանջի պայմաններում, անմար կրակի պես բոցկլտացել է ազգապահպանության անշեջ կրակը: Դրանք երկրամասում լուսավորություն, կրթություն տարածող առաջին օջախներն էին, հովանի՝ գրչության ծաղկմանը: Այդ կրթողները միաժամանակ պատմության, ճարտարապետության այն հուշարձաններից են, որոնք իրենց սքանչելի արվեստով անջնջելի կնիք դրեցին լեռնոտ երկրամասի դեմքին, զգալի չափով հարստացրին հայոց ազգային մշակույթը եւ մարմնավորեցին հայ ճարտարապետության մի առանձին՝ արցախյան դպրոցը:

Աղբրեջանի բռնապետության ենթակայության տակ գտնվելու տաս-

<sup>17</sup> Հ. Հյուբշման, *նշվ. աշխ.*, էջ 26-27:

<sup>18</sup> Մ. Խորենացի, էջ 163:

նամյակներին Լեռնային Ղարաբաղի հայության կյանքի բոլոր բնագավառներում արմատավորված ծայրաստիճան աղետալի վիճակը վկայում է, որ հայկական երկրամասում թուրք-ազերիների իրականացրած քաղաքականությունը, կազմակերպած հանցագործությունների յուրօրինակ շղթան, ունեցել է մի անսքող նպատակ՝ հնարավորին չափ արզելակել սոցիալ-տնտեսական զարգացումը, ոտնահարել հայ բնակչության շահերը, իրավունքները, ստեղծել անտանելի վիճակ եւ դրանով իսկ արագացնել հայրենի երկրամասից հայերի դուրս մղումը: Հայերը, որ 1923 թվականին, Լեռնային Ղարաբաղը Այր. ԽՍՀ-ին բռնակցելու ժամանակ կազմել էին բնակչության 94,4 տոկոսը, 1979 թ. մարդահամարի տվյալներով ոչ միայն չեն ավելացել, այլև պակասել են 18,7 տոկոսով: Նշված ժամանակաշրջանում հայկական երկրամասի քարտեզից վերացվել են 47 հայկական գյուղեր, փակվել եւ ավերվել են 44 բնակավայրերում գործող 54 արդյունաբերական ձեռնարկություններ, կտրտվել եւ արմատահան են արվել հազարավոր հեկտար շահութաբեր այգիներ, էրոզիայի է ենթարկվել վարելահողերի, արտավայրերի զգալի մասը:

Դուրսընկած ավելի ողբերգական էր մարզի հայկական ազգային մշակույթի բնագավառում: Գոյություն ունեցող 600 եկեղեցիներից ու վանքերից չէր գործում եւ ոչ մեկը: Պանթուրքիզմի գաղափարախոսությամբ տառապող թուրք-ազերիները ակնհայտորեն չէին կարողացել հաշտվել այն մտքի հետ, որ մուսուլմանական հանրապետությունում գոյություն ունենա քրիստոնեական-հայկական առանձին մշակույթ: Դրա համար էլ ամեն կերպ փորձել են հիմնովին ավերել կամ սեփականաշնորհել նրա մշակույթը: 1930-ական թվականների սկզբին հայ ավատացյալների առաջ ամուր փակվեցին վանքերի, եկեղեցիների դռները, հոգետր հայրերը բշտեցին Սիբիր, եկեղեցական արժեքավոր գրքերը, սրբապատկերները այրվեցին, իսկ գույքը կողոպտվեց: Եվ ապա սկսեցին բոլշեիկների որդեգրած աթեիստական դիրքերից ոչնչացնել, ձեռափոխել, փարսխներին-գոմերի վերածել եկեղեցիները, վանքերը, ջարդել-փշրել խաչքարերը, տապանական կոթողները եւ դրանք իբրև էժան շինանյութ օգտագործել նորակառույցներում: Փաստորեն մշակույթի մի կատարյալ ջարդ է իրականացվել: Կողոպտվել, ոչնչացվել է մի ամբողջ պատմություն: Մեկ բառով՝ կատարվել է վանդալիզմ, այն էլ մոլեզմու վանդալիզմ, որին գոհ են գնացել ոչ միայն վանքերը, եկեղեցիները, խաչքարերը, բնակավայրերը, գերեզմանոցները, այլև ինքնավար մարզի հայ բնակչությունը:

Այսպիսով, Անդրկովկաս թափանցած եւ հայկական պատմական տարածքներում հիմնավորված ազերի-թուրքերը, համագործակցած Ռուսաստանի կոմունիստական գործիչների եւ Սովետական Միության

թուրքամետ ղեկավարության հետ, անհաշիվ տառապանքներ պատճառեցին տեղաբնակ հայությանը: Փաստորեն XX դարում Ղարաբաղում, եւ ոչ միայն Ղարաբաղում, անարգել իրականացվեց հայերի հետապնդման, ոչնչացման ու տեղահանման մի համալիր ծարագիր: Միայն ղարաբաղյան ազատագրական հուժկու պայքարը խափանեց հայկական երկրամասը հայաթափելու նրանց հրեշավոր մտադրությունը՝ փրկելով նաև ԼՂՀ տարածքում հրաշքով պահպանված հուշարձանները վերահաս կործանումից:

Բաբվում 1963 թ. տպագրված «Լեռնային Ղարաբաղ» գրքի 75-76-րդ էջերից ստորեւ բերվող տողերը ակներե վկայում են, թե հայկական հուշարձաններն ավերելու, ոչնչացնելու ինչպիսի ազդեցիվ մտայնություն ու մթնոլորտ գոյություն ունեի Այլքեջանում: Փաստորեն պետականորեն կոչ էր արվել ոչնչացնել քրիստոնեական եկեղեցիները, վանքերը, ճարտարապետական վեսն հուշարձանները, որովհետեւ, ինչպես գրված է նշված գրքում, «ողանց բազմազանության առկայությունը ցույց է տալիս, թե որքան շատ է եղել կաշկանդված Ղարաբաղի բնակչությունը կրոնական կապանքներում», որից նա հազիվհազ «ազատագրվել է շնորհիվ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեոլյուցիայի»:

Սա դեռ ոչինչ: Գրքում առանց դիմակի հուշարձաններ կոչվելու իրավունքից զրկում են ճարտարապետական գրոյսգործոց մոնումենտալ կառույցները, վանքային խոշոր համալիրները, ժանյակագարդ խաչքարերը, ազգապահպան, գրչության, դպրության օջախներ հանդիսացող եկեղեցիները: «Լեռնային Ղարաբաղում,- կարդում ենք նշված գրքում,- բազմաթիվ վանքերի, եկեղեցիների եւ խաչքարերի թվարկումը պատմական հուշարձանների շարքում թվում է, որ ոչ մի արժեք չունի ոչ քաղաքական, ոչ կուլտուրական տեսակետից, որովհետեւ ակներե է նրանց բացասական դերն ու իմաստը ժողովուրդների հասարակական կյանքում եւ մանավանդ մեր սոցիալիստական իրավակարգում»: Անվիճելի է, որ նպատակ է հետապնդվել ոչնչացնել քրիստոնեական հայկական մշակույթի հետքերը: Եթե դա այդպես չէ, ապա ինչո՞ւ վանքերի, եկեղեցիների, սրբերի շարքում չեն թվարկվում մուսուլմանական մզկիթները, այվանները: Բայց չէ՞ որ մզկիթներում մարքսիզմ-լենինիզմի գաղափարներ չէին քարոզվել եւ ոչ էլ կրոնական կապանքներ փշրվել: Ահա թե Այլքեջանում հայկական հուշարձանների նկատմամբ ինչպիսի թշնամական տրամադրություն կար: Ճիշտ այնպես, ինչպես Աֆղանստանում թալիբներն էին ոչնչացրել ոչ իսլամական հուշարձանները: Եվ այդ չէ՞ որ պատճառը, որ բոլորի լռության պայմաններում մեկ ամսվա ընթացքում հողի երեսից մաքրեցին Շուշիի հայկական քաղաքամասը, որը գրեթե ամբողջությամբ պահպանվում էր: Թեեւ կար որոշում այն հիմնովին վերականգնելու վերաբերյալ: Սակայն վերականգնելու փոխա-

րեն ազերի-թուրքերը ավերեցին հայկական քաղաքի 7 հազար շինությունների հետ միասին նաև Ազուլեցոց սբ. Աստվածածին, Մեղրեցոց սբ. Աստվածածին եկեղեցիները, Կուսանաց վանքը, հունա-ռուսական եկեղեցին, բուլղոզերներով հողին հավասարեցրին հայկական գերեզմանոցները:

Այս ամենը տեղի է ունեցել աղբբեջանական իշխանությունների հանձնարարությամբ, բաբվեցի ճարտարապետ-քաղաքաշինարարների բացահայտ կոչերով: Այսպես, Բաբվում ռուսերեն լույս տեսնող «Ստրոխտել» թերթը (2/II 1966թ.) տպագրել է ոմն ճարտարապետ Կ.Սայիդովի հոդվածը, որտեղ նա կոչ էր անում Շուշիում իրականացնել նոր վանդալիզմ, ավերել հայկական գերեզմանոցները, հրաշքով փրկված հուշարձանները: Քանզի ինչպես նա է գրել, «Մեռածները (հայերը - Շ.Մ.) կերան ապրողներին» (աղբբեջանցիներին - Շ.Մ.): Սակայն, իրականում, հայաթափված քաղաքում բնակվողված աղբբեջանցիները հեշտությամբ ոչ միայն կերան, այլև մարսեցին մեռած հայերի գերեզմանաքարերը:

Իսկ ինչո՞ւ կերան «մեռածներին», քանդեցին եկեղեցիները, ավերեցին գերեզմանոցները: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հայկական գերեզմանոցներում պահպանվում էին տասնյակ հազարավոր մահարձաններ, որոնց վրա եղած հայերեն արձանագրությունները ունեին XVIII դարի քվագրություններ, ապա աղբբեջանական վայրագների դիրքորոշումը բավական պարզ էր դառնում: Չէ՞ որ չափից ավելի ուժեղ եւ անվիճելի փաստարկ է հայկական գերեզմանատների (XVIII-XX դդ.) գոյությունը՝ աղբբեջանական կեղծարարների պատմական պատվախնդրության համատեքստում: Չէ որ նրանք անընդհատ փողհարում են, թե «Շուշին XVIII դարի աղբբեջանական քաղաք է» եւ իբր թե այնտեղ «Աղբբեջանի հյուրընկալ հողում հայկական առաջին գաղթականները հայտնվել են 1828 թ. հետո»: Իբր ԼԳԽՄ-ում չկա մի գերեզմանաքար, որ ունենար այդ տարեթվից առաջ գրություն: Ծիծաղելի է, եւ ոչ միայն ծիծաղելի:

Միայն ԼԳՀ տարածքում պահպանվում է մոտ երկու հազար հին գերեզմանատուն՝ հայկական արձանագրություններ կրող հարյուր հազարավոր մահարձաններով, խաչքարերով, որոնք ունեն VIII-XVIII դարերի քվագրություններով հայերեն տասանագրեր: Անհավատալի է, որ մեր հարեւանները տեղյակ չլինեն այդ ամենին, քանի որ մահարձանների ու արձանագրությունների մասին տարբեր լեզուներով բազմաթիվ հրատարակություններ կան: Օրինական հարց է ծագում՝ ինչպե՞ս կարող է Շուշին աղբբեջանական քաղաք հայտարարվել, երբ այնտեղ գտնվող 8 գերեզմանոցներից 7-ը հայկական-քրիստոնեական է եւ միայն մեկը՝ աղբբեջանական, որտեղ թաղումները սկսվել են 1920 թ. ե-

ղերական մարտի 23-ից, այսինքն հայերի ցեղասպանությունից հետո միայն: Որպեսզի նման հարց այլեւ չառաջանար, թուրք-ազերիները քաղաքի հայկական ավերակները մաքրելուց հետո սկսեցին ավերել հինգ եկեղեցիները, յոթ գերեզմանատները եւ հրաշքով պահպանված հայկական այլ բնույթի հուշարձանները, որոնք ձեռափոխվելով չէին հարմարեցվել մոսուլմանական ճարտարապետության ոգուն... Այդ ամենի վառ եւ հրեշավոր պատկերները տրված են «Շուշի՝ ողբերգական ճակատագրի տեր քաղաքը» ռուսերեն, անգլերեն առանձին հրատարակություններով (Երևան, 1997, 1999 թթ.) տպագրված պատկերազարդ աշխատություններում:

Խորհրդային իշխանության 70 եւ արցախահայությանը պարտադրված կործանիչ պատերազմի յոթ տարիներին, թուրք-ազերիները ոչնչացրել են մշակույթի հազարավոր հուշարձաններ, քրիստոնեական-հայկական քաղաքակրթության գլուխգործոցներ, ավերել ու կողոպտել են Արցախի, Ուտիքի, Նախիջեւանի, Գարդմանքի հայկական մշակույթի անգնահատելի գանձերը: Այսօր դժվար է չափել այն կորուստները, որ հայ մշակույթը կրել է Բաբվի կողմից ստեղծված արհեստական արգելքների եւ հետապնդումների հետեւանքով: Իսկ ինչքան են այն կորուստները, որ հաճախակի հասցվել են հայկական երկրամասին, նրա մտավորականության ոչնչացման ու դուրս մղման ճանապարհով: Հայկական մշակույթային ամբողջ ժառանգությունը համարյա թե քաքցված, յոթ փականքի տակ է եղել: Լեռնային Ղարաբաղի եւ հարակից հայկական շրջանների պատմության եւ մշակույթի հարցերին դիմելիս Բաբվում միշտ ելնում էին անցյալ դարի 30-ական քվականներին արմատավորված «այն ամենը, ինչ գտնվում է Ադր. ԽՍՀ տարածքում, պատկանում է աղբբեջանցիներին» սկզբունքով: Փաստորեն կանխամտածված քողարկման, նենգափոխման ճանապարհով սխտեմատիկաբար կեղծվել էր Արցախ-Ղարաբաղի պատմությունը, կամայականորեն որոշվել հուշարձանների ազգային պատկանելությունը: Մի խոսքով՝ մի սերնդի աչքի առաջ օրը գերեկով կողոպտվել էին արցախահայության պատմությունը, ազգային հարուստ մշակույթը:

Արցախահայությունը զրկված էր իր պատմության, մշակույթի կամ թեկուզ առօրյա կյանքի մասին որեւէ ուղեցույց, գրքույկ կամ աշխատություն տպագրելու, թանգարաններ ստեղծելու, պեղումներ կատարելու, հուշարձանները ուսումնասիրելու, վերականգնելու, ազգային տոներ նշելու հնարավորությունից: Գպրոցներում արգելված էր հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության դասավանդումը: Բարձրիքողի վիճակում էր գտնվում անցյալի մշակույթային արժեքների ցուցադրությունը, պահպանությունը: Այլ խոսքով՝ Ղարաբաղի հայերի ձեռքերն ամուր կաշկանդված էին, լեզուները սեղմված ատամների արանքում:



փայլապես վնասարար նյութեր» ցուցադրող (մանրամասն տե՛ս Շ. Սկրտչյան, Արցախում եւ ուրիշ պատերազմ տեսա, Եր., 1996, էջ 134-151): Թանգարանը տակնուվրա արեցին, մշտական ցուցադրությունը քանդեցին, իսկ առավել արժեքավոր ցուցանմուշները քանգարանից դուրս հանեցին եւ ուղղակի քափեցին բաց երկնքի տակ:

Օրինական հարց է ծագում, իսկ ինչո՞ւ հայկական երկրամասի, հայկական քանգարանում կարելի է ցուցադրել արաբական, պարսկական, բուրքական բեռավի դրամներ, իսկ Լեռնային Ղարաբաղում՝ Տիգրանակերտ քաղաքատեղում հայտնաբերված Տիգրան Մեծի եզակի դրամը՝ ո՛չ: Ինչո՞ւ կարելի է XVIII դարի երկրորդ կեսին Արցախ քափանցած օտարական խանի վերաբերյալ նյութեր ցուցադրել, իսկ Արցախում ծնված Արցախի Մեծ իշխան Մելիք Եգանին՝ ո՛չ: Մեզ մնում է հիշեցնել աղբբեջանցի հայատյաց կեղծարաներին, որ պատմությունը բնավ չի հանդուրժում ստորադաս եղանակով կռացնել, խոնարհել, ձեռավորել փաստերը եւ իրողությունները, քանզի ճշմարտությունը վաղ թե ուշ դուրս է գալու լույս աշխարհ, իսկ կեղծիքը նետվելու է ալբանոց:

Հայկական հուշարձանների պահպանության ուղղությամբ ցուցաբերված հանցավոր վերաբերմունքը հրապուրել էր նաեւ հանցագործ տարրերին, որոնք գանձախուզության նպատակով ավերել են բազմաթիվ մեծարժեք կոթողներ, պղծել եւ քաղանել գերեզմանատները, այդ նպատակի համար օգտագործելով տեխնիկայի գանազան սարքավորումներ: Նման բարբարոսության եւ քաղանի են ենթարկվել այնպիսի հանրահայտ ճարտարապետական հուշարձաններ, ինչպիսիք են Գանձասարը, Խուրավանքը, Խաթրավանքը, Գոչավանքը, Հակոբավանքը, Երիցմանկանց վանքը, Կոշիկ անապատը, Եղիշ Առաքյալի վանքը եւ այլն:

Մինչեւ 1970-ական թվականների վերջերը Բաքում հայկական հուշարձանները խնամքով թաքցրել կամ անտեսել է դրանց գոյությունը: Բաքվում, Մոսկվայում եւ արտասահմանում տպագրված տուրիստական քարտեզներում, ուղեցույցներում, բուկլետներում եւ այլ բնույթի աշխատություններում Լեռնային Ղարաբաղին հատկացված էջերում տեղադրվել են մուսուլմանական այնպիսի հուշարձանների լուսանկարներ, որոնք ոչ մի առնչություն չունեն ԼՂԻՄ-ի հետ (տես Մոսկվայում 1971թ. տպագրված «Աղբբեջան» պատկերագրքի ԼՂԻՄ-ին հատկացված էջերի արանքում խցկած Կիրովաբադի XIX դ. մզկիթի մեծադիր նկարը): Մեկ-մեկ էլ, երբ հարկադրված հիշատակվել է որեւէ հայկական հուշարձան, ապա անպայման աղավաղված անուններով, աղվանական-աղբբեջանական պատկանելիությունն ընդգծելով, թեւս այդպիսիք չկային Աղբ. ԽՍՀ տարածքում գտնվող պետական պահպանության ենթակա պատմաճարտարապետական հուշարձանների ցուցակներում:

Հարց է ծագում՝ իսկ ինչո՞ւ էին Աղբբեջանի իշխանավորները, գիտնականները յոթ փականքի տակ պահել հայկական հուշարձանները: Կամ դրանց պատկանելիությունը լողզել: Նույնիսկ 1960-ական թվականների առաջին կեսին Աղբ. ԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի խիստ գաղտնի շրջաբերականով պարտավորեցվել են ԼՂԻՄ-ի շրջանների բոլոր գյուղական խորհուրդների նախագահներին, որ «իրենց բնակավայրերի տարածքներում գտնվող հայկական հուշարձանները փակ գոտիներ են, ուսումնասիրման, լուսանկարման ենթակա չեն: Հետեւապես ամենայն պատասխանատվությամբ նրանք (գյուղխորհրդի նախագահները - Շ.Մ.) չպետք է թողնեն, որպեսզի հայերը, ռուսները, եվրոպացիները առանց Բաքվի հատուկ թույլտվության, այցելեն հայկական հուշարձանները, լուսանկարեն, չափագրեն եւ ուսումնասիրեն դրանք»: Միաժամանակ Աղբ. ԽՍՀ գյուղնախարարությանը ցուցում է տրվել կոլտնտեսության նախագահներին, որ հուշարձանները կարող են «վերափոխելով օգտագործել իբրեւ փարախներ-գոմեր, պահեստներ» (տե՛ս Ավետարանոցի գյուղխորհրդի արխիվ, 1966թ., գ. 3, թ. 2-4):

ՊԱԿ-ի նշված շրջաբերականից եւ Աղբ. ԽՍՀ կառավարության 1968 թ. ապրիլի 2-ի N 140 որոշմամբ հաստատված պետության կողմից պահպանվող հուշարձանների ցուցակից երեսուսեւ, որ Աղբբեջանում հայկական պատմամշակութային հուշարձանների բուն գոյությունը, որտեղ էլ դրանք գտնվելիս լինեն, նեղսիրտ էին դարձնում մեր հարեւաններին, քանզի էլ ինչ բուրքի հայրենիք, կամ «исконно азербайджанская земля», երբ նրա գրեթե բոլոր հուշարձանները հայկական են: Դեռ ավելին, ինչ «հնագույն ժողովուրդի» մասին կարող է խոսք լինել, երբ մեր օրերում, «աղբբեջանականության մասին Բաքվում այնպիսի անվստահ տեսակետներ են արժարծվում, որ ոչ ոք դեռեւս չգիտի, թե ինչպես պիտի կոչել իրենց ազգային լեզուն» («Լոս Անջելես Թայմս», 7/IV-1993թ.): Շուշիում ծվարած խաների օրոք (XVIII դ. երկրորդ կես) եւ հետագա շուրջ 175 տարվա ընթացքում նրանք՝ Արցախ քափանցած եկվորները՝ «Կովկասի թաթարները», կարողացել են կառուցել միայն երեք փոքրածավալ պարսկական մզկիթ, այն էլ XIX դ. վերջերին եւ XX դ. սկզբներին, հայ քարգործ վարպետներ վարձելով, ավելի քան 20 հազար հայկական հուշարձանների դիմաց: Ինչ մնում է այսօրվա Աղբբեջան կոչվող Արեւելյան Հայաստանի մյուս վայրերի՝ Բաքվի, Շամախու, Շաքիի, Գանձակի, Պարտավի եւ այլ տեղերի մահմեդական հուշարձաններին, ապա դրանք ոչ մի առնչություն չունենին բուրք-ազերիների հետ: Դրանք պարսիկների կամ տեղաբնիկ մահմեդականների հուշարձաններ են, ազերի-բուրքերի կողմից սեփականացված հավատի մուսուլմանության հողի վրա: Հերթական քայլը հայոց խաչքարերն էին, որը, սակայն, կեղծարարների կողորդում մնաց: Սա է ճշմարտությունը եւ դրա-



նի մարդասիանալու իրենց համար հատուկ նշված է, թե բնակչության որ տոկոսն է նստակայաց, որը՝ քոչվոր:

Ահա թե ինչու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ հարակից շրջաններում բնակվող քրդա-ադրբեջանական բնակավայրերում չի արձանագրվել թեկուզ մեկ հուշարձան, որը պատկանի նորաբնակներին, այսինքն ադրբեջանցիներին: Դե, եթե այդպիսիք լինեին, ապա կհիշատակվեին Բաքվում տպագրված գրքերում, կմտցվեին Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հուշարձանների ցուցակներում: Չկան, որովհետեւ, ինչպես հայտնի է, Շուշիում XVIII դարի երկրորդ կեսին բնակվող օտարածին խաների վայրագությունների եւ ոճրագործությունների հետեւանքով հայ բնակչությունը հրով ու սրով դուրս է մղվել իրենց պապենական բնակավայրերից եւ ամայացված-դատարկված հայկական հինավուրց տարածքներում հիմնավորված խաշնարած թուրքալեզու ցեղերը ապրում էին թաղիքապատ վաններում, քանզի քարը քարի վրա դնել չգիտեին, անգամ նրանք որոշակի գերեզմանատներ չունեին, որովհետեւ տարվա տարբեր եղանակներին, տարբեր վայրերում էին լինում իրենց հոտերի հետ: Հայկական բնակավայրերը օգտագործում էին որպես ձմեռային արտավայրեր, իսկ վանքերը, եկեղեցիները՝ փարախներ: Բացի այդ, քոչվորները չունեին ազգային որոշակի պատկանելություն: Դրա համար էլ նրանք գիտական գրականության մեջ հիշատակվում են մերթ որպես մահմեդականներ, որոնք խորհրդային, բոլշեիկյան տիրապետության առաջին 15 տարիներին կոչվում էին կովկասյան թաքարներ, ապա ադրբեջանցիներ, իսկ 90-ական թթ. կեսերից՝ թուրք-ազերիներ:

Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարակից տարածքները, որոնք խորհրդային ժամանակներում արհեստականորեն բաժանվել էին պայմանական վարչական շրջանների (Լաչինի, Քելբաջարի, Ադդամի, Ֆիզուլուի, Ջեբրայիլի, Կուբաթլուի եւ Չանգելանի) ազատագրումով քարենպաստ պայմաններ ստեղծվեց ուսումնասիրելու, հաշվառման վերցնելու Արցախի այդ պատմական գավառների հուշարձանները: Տարածքներ, որոնք Արցախի մշակութային արեալի օրգանական մասերն են, հայ ժողովրդի պատմության մեջ կարեւոր տեղ գրաված մշակութային կարեւոր օջախներից:

Բոլորովին վերջերս հայերեն, ռուսերեն, անգլերեն հրատարակվել են պատմաբան Սամվել Կարապետյանի «Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում» (Եր., 1999-2001թթ.) աշխատությունները, որտեղ հանգամանալից ուսումնասիրված է նշված շրջանների շուրջ 1700 հայկական հուշարձան: Ազատագրված տարածքների հուշարձանների մասին հոդվածներ են հրա-

տարակել նաեւ Շահեն Մկրտչյանը, Հակոբ Սիմոնյանը, Սլավա Մարգսյանը, Ալեքսան Հակոբյանը: Հատկապես հիշատակության արժանի է վերջինիս գիտական արժեքավոր հրատարակումը (Ա. Հակոբյան, «Հակարիի վերնահովտի նորահայտ վիմագրերը», «Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1998թ. N1-2, էջ 270-324): Հրատարակումներում ընդգրկված հազվագյուտ, ահավոր եւ չափազանց խոսուն գունավոր, սեւ ու սպիտակ լուսանկարները, որոնց ճնշող մասը տպագրվել է առաջին անգամ, ցնցող տպավորություն են թողնում: Ջարդված, փշրված հարյուրավոր հայերեն վիմագիր արձանագրությունների պատառիկներ, քանդակազարդ բեկորներ, սրբապղծված ձեւավոր մահարձաններ, որոնք թուրքազերիները իշխանությունների խրախուսանքով ջարդել ու տեղադրել են հասարակական եւ բնակելի շենքերի պատերի մեջ: Ժամանակին այդ վանդալիզմի օրինակը տվել է Մ.Ջ. Բաղիրովը: Նրա կարգադրությամբ Իստիսու առողջարանի շրջակայքի հայկական միջնադարյան եկեղեցիները քանդվել են, դրանց քարերով կառավարական ամառանոց, բաղնիք կառուցվել, որպեսզի Ադրբեջանի առաջին դեմքը այդ բաղնիքում կաթի մեջ լողանալուց հետո միայն մերձենա իր սիրտխիներին:

Դրանք վանդալիզմի եւ վայրագության խոսուն փաստարկներ են, հայկական-քրիստոնեական մշակույթի ոչնչացման-ավերման վկայություններ: Տարօրինակ ու զարևուրելի է, որ հայկական մշակույթի սպանողը, հայերի ցեղասպանությունը Շուշիում, Հազարի գետի հովտում, Քելբաջարում, արաքսամերձ տափաստաններում, ինչու չէ նաեւ Սումգայիթում, Բաքվում, Գանձակում, Գարդմանքում, Նախիջեւանում, առանց ամոթի ետին թվով ներկայացվում են որպես «ադրբեջանական ժողովրդի կատարած փառապանծ սխրանք»: Իսկ հայերին էլ ներկայացնում ազերի-թուրքերի նկատմամբ ցեղասպանություն հրահրողներ: Նույնիսկ մտմտում են Բաքվում, հրաշքով պահպանված հայկական Մայր տաճարը դարձնել ցեղասպանության թանգարան, որտեղ հավանաբար կցուցադրվեն նենգափոխված «ստեղծագործություններ», հակահայկական «գլոխգործոցներ»: Այո՛, ինչպես գրել է Մոսկվայում հրատարակվող “Ноев Ковчег” թերթը (ОКТЯБРЬ, 2001г.) ազերի-թուրք կեղծարարների ցինիզմը չունի սահմաններ:

Մինչեւ 1960-ական թվականների կեսերը ինքնավար մարզի տարածքում գտնվող հուշարձանները յոթ փակի տակ էին, «արգելված գոտիներ»: Դրա համար էլ նրանցով ոչ ոք չէր զբաղվել, անգամ հաշվառման չէին ենթարկվել, պարզապես ով ինչպես ուզում էր, նրանց հետ վարվում էր: Սակայն, 1966 թ. մարտի 1-ին եւ դեկտեմբերի 27-ին տեղական «Սովետական Ղարաբաղ» պաշտոնաթերթում տպագրված հոդվածները միանգամից արցախցիներին դուրս հանեցին լեթարգիական քնից, եւ նրանք սկսեցին մտահոգվել ավերվող, ոչնչացվող իրենց հու-

շարժանների ճակատագրով: Տազնապահարույց բողոք-նամակներ հայտնվեցին քեթքերի էջերում, ժողովներում սուր ելույթներ հնչեցին: Մարդիկ դժգոհում էին հուշարձանների նկատմամբ անիրաժեշտ վերաբերմունքի եւ հոգատարության բացակայությունից, քանզի նրանց վերականգնման ու պահպանության մասին միութենական մարմինների որոշումները Ղարաբաղում կիրառություն չէին գտնում: Ահա թե ինչու տեղական, մարզային կուսակցական եւ գործադիր մարմինները հարկադրված անդրադարձան երկրամասի հուշարձանների ծայրաստիճան ոլբալի վիճակի քննարկմանը: Մասնավանդ որ 1968 թ. Ադր. ԽՍՀ կառավարության կողմից հաստատված եւ պետության կողմից պահպանվող հուշարձանների պաշտոնական ցուցակներում չէին ընդգրկված եղել ԼՂԻՄ գրեթե բոլոր հիմնական հուշարձանները: ԼՂԻՄ-ում հաշվառված ավելի քան 1500 հայկական քրիստոնեական հուշարձաններից նշված կառավարական ցուցակում ընդգրկված է միայն 45-ը, այն էլ աղավաղված անուններով: Եթե նախորդ խարդավանքները, կապված թանգարանային արժեքների յուրացման, հուշարձանների գոյության ժխտման հետ, հայկական երկրամասում ընդունում էին լռությամբ, գերի մնալով «վերադասի որոշումները պարտադիր են ստորադասի համար» լեռնային տխրահռչակ սկզբունքին, ապա այս պարագայում դարաբաղի հայերը ըմբոստացան եւ Սովետական իրավակարգում առաջին անգամ ապացուցեցին, որ այսպես կոչված բոլշեիկների որդեգրած «ղեմկրատական ցեմտրալիզմ»-ի սկզբունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ շիրմա, նենգություն, ազգային փոխրամասնությունների կործանելու, մորթելու թակարդ: Այս ամենը զգալով, Լեռնային Ղարաբաղի կուսմարզկոմը եւ մարզգործկոմը քաղաքական համարձակություն ունեցան համատեղ որոշում (29/VI-70թ.) կայացնել ու հատուկ գրությամբ (23/VII-70թ.) դիմել Ադր. ԽՍՀ կառավարությանը եւ խնդրել, որ պետության կողմից պահպանվող հուշարձանների հանրապետական ցուցակների մեջ ընդգրկվեն ԼՂԻՄ առավել կարեւոր հուշարձանները: Սակայն, պաշտոնական Բաքուն իրեն հատուկ նենգությամբ հայտնում է, որ «ԼՂԻՄ հուշարձանները հուշարձաններ կոչվելու իրավունք չունեն, քանի որ անցյալում դրանք եղել են կրոնական վնասարար գաղափարներ քարոզող օջախներ»: Հետեւապես «հարկ չկանրանց վերականգնման վրա ծախսեր կատարել» եւ պահպանության հարց բարձրացնել (տե՛ս Շ. Սկրտչյան, Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Եր., 1996թ., էջ 154): Որոշ ժամանակ հետո մարզային իշխանությունները դարձյալ անդրադառնում են հուշարձանների հարցին: Որոշվում է. ա) տեղական բյուջեի հաշվին վերականգնել «Հայ ճարտարապետության հանրագիտարան» Գանձասար վանքը: Սակայն, Ադր. ԽՍՀ նշակույթի նախարարության խուսազրությամբ տապալվում է այդ

որոշման կատարումը եւս (տե՛ս ԼՂՀ արխիվ, ֆ. 3, ց.35, գ.33, կ.289, թ. 271): ք) Հրատարակել «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» ուղեցույցը: Որոշման այս կետը նույնպես ձախողվում է: Բաքուն իր տեղական կուսակցական դրածոի՝ Ադր. ԿԿ ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կետրկովի միջոցով հայտնում է, որ ուղեցույցի տպագրությունը «կծներ միայն ազգային սնասպարծություն եւ կխանգարեր աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությանը» (տե՛ս 1975 թվականի մարտի 21-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումի զեկուցումը, «Սովետական Ղարաբաղ», 23/III-75թ., N 69): Միթե Բաքուն կարծում է, թե մարդիկ, ազգային փոքրամասնությունները ինտերնացիոնալ են դառնում միայն այն ժամանակ, երբ իսպառ կտրված են լինում իրենց ազգային պատմությունից, անցյալի հիշատակներից, իրենց ազգային արմատից ու արյունից:

Բաքուն չէր բավարարվում քաղաքական պիտակներ կայցնելով: «Փնտրում», գտնում է նրանց, ովքեր նախանձախնդիր բարձրացրել են Լեռնային Ղարաբաղի հուշարձանների հարցը: Շատ շուտով աշխատանքից ազատվեցին մարզային պետական պատմաերկրագիտական քանգարանի տնօրեն Շահեն Սկրտչյանը, կուլտուրայի մարզային վարչության պետ Ժան Անդրյանը, կուսակցության ԼՂ մարզկոմի գաղափարական բաժնի վարիչ Միեր Խաչատրյանը, մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ Երվանդ Բաղդասարյանը: Մի որոշ ժամանակ անց նաեւ կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Գուրգեն Մելքումյանը եւ մարզգործկոմի նախագահ Մուշեղ Օհանջանյանը: Դրանից հետո, շուրջ 15-16 տարի հուշարձանների մասին ԼՂԻՄ-ում այլեւս «խտաող» չեղավ:

Այդ ժամանակահատվածում ԼՂ պատմաճարտարապետական հուշարձանների ճանապարհները սկսվում էին Ադր. ԿԿ ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կետրկովի աշխատասենյակից: Բայց քանի որ նա Բաքվի թելադրանքով «ատում» էր հայկական առավել կարեւոր բացառիկ արժեք ունեցող խաչքարերը, պաշտանմունքային հուշարձանները, արգելել եւ չէր թողել նրանց մոտ գնալ նկարահանումներ, ուսումնասիրություններ կատարելու համար: Ադրբեջանականացված Շուշի քաղաքի համար արգելք չկար: Այս քաղաքում արգելված էր միայն այն, ինչ հայկական է: Ի դեպ, Կետրկովի կարգադրությամբ տողերս հեղինակին 1987թ. օգոստոսի 20-ին դուրս են վռնդել Հաղրուքի շրջանից, որտեղ գնացել էի հուշարձանները նկարելու:

Ադրբեջանի իշխանությունները, որոնց թվացել է, թե ԼՂ հայկական հուշարձանների հարցը մեկլնդմիշտ փակուղի է մտցվել, առանց ԼՂԻՄ կուսակցական եւ պետական մարմինների զիտության, հապշտապ «Մարսից իջեցրել» է միանգամից 200 անանուն «աղվանական զամուկ-

ներ, խրամներ», «աղյրեջանական բնակելի շենքեր» ու «սածիլել» Լեռնային Ղարաբաղի տարածքում եւ, ապա, դրանք մտցրել պետության կողմից պահպանվող Ադր. ԽՍՀ կառավարության հաստատած հուշարձանների պաշտոնական ցուցակներում, թեւ Լեռնային Ղարաբաղում այդպիսիք չկան եւ լինել չէին էլ կարող: Դեռ ավելին, ըստ կեղծված թվագրությունների, այդ անանուն «հուշարձանները» հնացված են մի քանի դարերով, հավանաբար ցանկացել են ընդգծել դրանց պատմական արժեքը մեծացնելու միտումը: Այդ կեղծիքը բանիմացորեն մերկացվել է դեռեւս 1988 թ. Արցախի համապատասխան իրավասու կազմակերպությունների մասնագետների կողմից (տե՛ս «Ճորիդային Ղարաբաղ», 8/VII-1988թ.): Այսպիսով Բաքվում փչած հերթական փուշիկը, բնականաբար, չլիմացավ հողվածում բերված հսկափաստարկներին եւ անմիջապես պայթեց: Ի դեպ, մի առիթով Հեյդար Բաբան՝ Աղյրեջանի նախագահ՝ Հ. Ալիևը իր մոտ է հրավիրել վարձու փուշիկ փչողներին ու հայտնել. «Դուք գիտեք, որ ստի ոտքերը կարճ են լինում: Աշխատեք ձեր հորինած ստերը, կեղծիքները ճշմարտանման դարձնել, որպեսզի դժվարանան նրանց բացահայտումը եւ ունենան որոշակի դիմացկունություն»: Այստեղ տեղին է հիշեցնել, աղյրեջանցի «մոռացկուտ» հուշարձանագետներին, որ դեռեւս 1960թ. Ադր. ԽՍՀ եւ Հայաստանի ԽՍՀ գիտությունների ակադեմիաների համատեղ գիտական արշավախումբը չորս տարի շարունակ շրջագայել է Արցախում, տեսել, լուսանկարել հուշարձանները, գրի առել վիմագիր արձանագրությունները: Կատարվածի մասին արշավախմբի մասնակից հինգ հայ եւ հինգ աղյրեջանցի գիտնականների ստորագրությամբ ընդարձակ հաշվետվություն է ներկայացվել երկու հանրապետությունների ակադեմիաների ղեկավարներին:

Բայց քանի որ Արցախում՝ իմա Լեռնային Ղարաբաղում, հուշարձանների որմերի, խաչքարերի, մահարձանների եւ բարձրաբանդակների վրա փորագրված վիմագիր արձանագրությունները, ինչպես նշված է հաշվետվությունում, «բացառապես հայերեն են», ապա հայկական կողմին վերապահվել է հրատարակել դրանք (տե՛ս, Գիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյանը, Եր., 1972թ.):

Ինչպես մեծածավալ այդ պրակում, այնպես էլ վերոհիշյալ զեկուցագրում խոսք անգամ չկա «աղվանական» պատկանելիության որեւէ հուշարձանի գոյության մասին: Նման հուշարձան չկար նաեւ 1968 թվականի ապրիլի 2-ին, Ադր. ԽՍՀ մինիստրների խորհրդի 140 համարակիր որոշմամբ հաստատված, պետության կողմից պահպանման ենթակա հանրապետական ենթակայության հուշարձանների ցուցակում: Չկա, «աղվանական», «աղյրեջանական» պատկանելիության որեւէ հուշարձան նաեւ 1966թ. Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր բնակավայրերից ստացված հուշարձանների հաշվառման ցուցակներում:

Այսուհանդերձ, եթե կարելի է գոռով ենթադրել, որ «բնակելի տները» արհեստականորեն աղյրեջանական հուշարձան դարձնելու համար ելակետ են հանդիսացել այն ժամանակվա վարչական քարտեզը եւ այդ բնակարաններում ապրողների ազգային հատկանիշը, դա արդեն ինչ՝ որ չափով հասկանալի է: Բողոքովին անհասկանալին այն է, թե ինչ հատկանիշներ նկատի առնելով են Բաքվում մոզոնվել «ալբանական զամոկները»: Չէ որ Լեռնային Ղարաբաղում չեն շրջագայել նոր արշավախմբեր, չեն հայտնաբերվել սկզբնաղբյուրներ, որտեղ նշված լինելու թեկուզ մեկ «աղվանական» հուշարձան: Պարզապես Ադր. ԿԿ-ի Կենտկոմի կողմից տրվել է ցուցմունք՝ հապշտապ հորինել դրանք եւ պաշտոնապես ձեռնարկել ու դեռ տալ Ղարաբաղի հուշարձաններով հետաքրքրվողների քիմքին: Իսկ այդ ժամանակ արդեն (ղարաբաղյան հզոր շարժման պոռթկումից՝ 1988թ. փետրվարի 20-ից հետո) շատերը սկսեցին հետաքրքրվել նաեւ հայկական երկրամասի հուշարձաններով եւ թացը չորից զանազանել: Փաստ է, որ Երեւանում հայերեն, ռուսերեն արդեն հրատարակվել էին Լեռնային Ղարաբաղի հուշարձանների մասին Շահեն Սկյուռյանի ծավալուն աշխատություններն ու տարածվել ամենուրեք: Փաստ է նաեւ այն, որ ճարտարապետների միջազգային միությունը, եկեղեցիների միջազգային կազմակերպությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն մտադրվել էին փորձագետներ ուղարկել Լեռնային Ղարաբաղ, տեղում պարզելու հուշարձանների վիճակը, ազգային պատկանելությունը:

Սակայն, երբ Բաքվում ի վերջո հասկացան, որ ՊԱԿ-ի զաղտնի գրություններով այլեւս հնարավոր չէ լրոզել հայկական հազարավոր հուշարձանների գոյությունը, դիմեցին ավելի ստոր «էքսպերիմենտի»: Իրենք իրենց հայեցողությամբ դգել-փչեցին հայկական երկամասում իբրեւ պահպանվող ինչ-որ «ալբանական զամոկներ, տաճարներ» անանուն հուշարձանների ցուցակներ: Դրանք կցեցին Ադր. ԽՍՀ կառավարությանն առընթեր կրոնական գործերի խորհրդի (8/IX-1987թ. N158) շրջաբերականին եւ ուղարկեցին ԼՂԻՄ բոլոր շրջանների գործադիր կոմիտեների նախագահներին: Կառավարության անունից պահանջվում էր, որ հայկական շրջանների իշխանությունների հայ ղեկավարները պաշտոնական բլանկների վրա նույնությամբ արտագրեն վերելից՝ Բաքվից իրենց ներկայացված կեղծ ցուցակները եւ ստորագրություններով, կնիքներով հաստատված, վավերացված ետ վերադարձնեն: Այսքան պարզունակ խաբեությամբ, պարզապես ջալամություն անելով փորձել են մի կողմից «օրինականացնել» հայկական միջնադարյան հուշարձանների յուրացումը, ալբանացումը մյուս կողմից՝ մոլորեցնել հայ հասարակությանը: Նշված կրոնական խորհրդի մասնակցությունը տվյալ դեպքում թույլ էր տալիս չկասկածել հողաբաշխ շրջաբերականների ոչ լուսանցքային լինելուն եւ ստեղծում էր պատկառելիության

անհրաժեշտ պատրասմբ: Մինչդեռ ավելի ստոր նենգամտություն չէր կարելի պատկերացնել, երբ հուշարձանների հետ ոչ մի առնչություն չունեցող կրոնական գործերի խորհուրդը անցել էր իր պաշտոնական լիազորությունների սահմանը եւ առանձնահատուկ լիցիտիքամբ զբաղվել աչքակապությամբ: Երբ հայտնի է, որ հուշարձաններով յի պաշտոնե զբաղվում են հանրապետության մշակույթի նախարարությունը եւ հուշարձանների պահպանության հանրապետական կամավոր ընկերությունը: Լեռնային Ղարաբաղի հուշարձանների մասին փաստեր, հիմնավորումներ, պայդապես շինծու հիմքեր ստանալու արգահատելի մեթոդաբանությունը եւ ԼՂԻՄ իշխանություններին ծպտյալ շրջանցելը նպատակ է հետապնդել քողարկել կառավարական մակարդակով իրականացվող խարդավանքը:

Դեռ ավելին, ավելի մեծ արքուրդ չէր կարելի պատկերացնել, երբ Ադր. ԽՍՀ կառավարությունը իր 1988թ. ապրիլի 27-ի N45 որոշմամբ հաստատում է բացարձակ սուտը, կեղծիքը, «ալբանական զանկները» խմբաքանակը, որոնք իրականում չկան եւ երբեք էլ չեն եղել: Դրանք հորինվել են հիվանդագին մարդկանց երեւկայության անուրջներով եւ «օրինականացվել» իրեն չհարգող, հակահայկական մոլուցքով տառապող կառավարության կողմից:

Այսպիսով, Բաքուն քաղաքական փոփոխված հանգամանքների թելադրանքով փոխում է Ղարաբաղի հայկական մշակույթի վերաբերյալ իր որդեգրած նախկին (թաքցնելու, քողարկելու, ոչնչացնելու) տակտիկական՝ արդեն անկարող էր ժխտել հուշարձանների գոյության փաստը: Սակայն դրանք (համաձայն կրոնի գործերի խորհրդի կաղապարած ցուցակների) «հայկական չեն, այլ ալբանական-ադրբեջանական են»: Հետեւապես հարկ չկա հայկական երկրամասի հուշարձանների ուսումնասիրության ու վերականգնման աշխատանքներին մասնակից անել հայ մասնագետներին: Ահա թե ինչումն է կայանում «ալբանական տաճարներ» բլեֆի իմաստը, հայկական-քրիստոնեական հուշարձանները պահպանելու, վերականգնելու մասին վերադաս միութենական մակարդակով ընդունված որոշումների եւ առաջարկությունների կատարումը ձախողելու Ադրբեջանի ճարպիկ ղեկավարների հերթական սաղլանքների բուն նպատակը:

Այս կեղծիքի դեմ ժամանակին հանդես է եկել նաեւ Ադրբեջանի գրողների միության քարտուղար Չ. Աբդուլաեւը: Նա գրել է. «Մտնելով անհարկի վեճի մեջ, մենք՝ ադրբեջանցիներս, փրփրած բերաններով սկսել ենք ապացուցել, որ ԼՂԻՄ տարածքում կանգնած են բացառապես ալբանական հուշարձաններ, այլ ոչ թե հայկական» («Բակինսկի ռաբոչի», 1988թ., N 236): Այսուհանդերձ Ադրբեջանի իշխանությունները քաղաքական աներեւակայելի խարդավանքներով ու խուսազրու-

քյուններով խափանեցին ճարտարապետների միջազգային միության եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպած փորձաքննական հանձնաժողովի մուտքը Լեռնային Ղարաբաղ: Իսկ ինչո՞ւ: Որովհետեւ անաչառ փորձագետները կարող էին տեղում օբյեկտիվորեն գնահատել հայկական հուշարձանների պահպանության տխուր իրավիճակը եւ պարզել դրանց էթնիկական պատկանելիությունը: Իսկ դա թուրք-ազերիների սրտով չէր, որովհետեւ կբացահայտվեր ճշմարտությունը, կպայքեր նրանց հորինած ստերի տուպակը:

ԼՂԻՄ-ի մասին ԽՍՀԿ Կենտկոմի եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի որոշումից բխող, ՀԽՍՀ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության եւ օգտագործման գլխավոր վարչության մտադրությունը Ստեփանակերտում ստեղծել գլխա-արտադրական տեղամաս, հուշարձանների չափագրման, վերականգնման նախագծեր կազմող ճարտարապետական արվեստանոց, առաջարկությունները նույնպես կտրականապես մերժվեցին Ադրբեջանի համապատասխան գերատեսչությունների կողմից:

Օգտվելով խորհրդային կարգերի թերասացությունների ամբողջ համակարգից Ադր. ԽՍՀ իշխանությունները ջղածգութամբ մատնացույց էին անում Ադրբեջանի վարչա-տարածքային սկզբունքը, մոռանալով, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը նույնպես ԽՍՀՄ-ի Սահմանադրությամբ ամրագրված որոշակի վարչատարածքային միավոր է: Հենց այդ սկզբունքով էլ մշտապես առաջնորդվել են թուրք-ազերիները: Ասել կուզի, Ղարաբաղը գտնվում է մեր տարածքում, ինչպես կուզենք, այնպես էլ կվարվենք նրա հետ: Դրա պերճախոս վկայություններն են միութենական մարմինների հանրահայտ որոշումների ոտնահարումը: Անգամ ԼՂԻՄ-ի մասին ընդունած Մոսկվայի վերոհիշյալ հայտնի որոշումից հետո 1989 թ. հունիսին թուրք-ազերիները հյդեհեցին Շուշիի նշանավոր Ղազանչեցոց եկեղեցին, դեկտեմբերի 25-ին տակնուվրա արեցին Բաքվի հայկական եկեղեցին: Վառեցին կրոնական գրքերը, գողացան սրբապատկերները, եկեղեցու գույքը: Այնուհետեւ իրեւտակոծեցին Առաքել գյուղի սբ. Մարիամ կենտրոնագմբեթ եկեղեցին, Ամարասի վանական համալիրը, Նորաշենի, Բանաձորի, Յորի եկեղեցիները, Բերդաձորի Պարին Պիժ եկեղեցու մոտ գտնվող մատուռը եւ մնացին անպատիժ: Մինչդեռ մեջլոները մինարեթների հետ միասին հայերը պահում-պահպանում են Շուշիում, Աղդամում: Թեեւ դրանք անցել են պատերազմի բովով, այսուհանդերձ իրենց նախաստեղծ տեսքով կանգուն են եւ հանրությանը ներկայանում են որպես հուշարձաններ: Դրանցում չեն պահվում ռազմամթերքներ, ինչպես ադրբեջանցիները՝ Շուշիի հայկական Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց հսկա եկեղեցում պահում էին «Գրադի» հազարավոր արկեր:

Ինչ վերաբերում է Մոսկվա, Երեւան եւ միջազգային կազմակերպությունները հեղեղած աղբբեջանցիների ծավալուն գրություններում հռչակված 4,5 մլն. ռուբլուն, ապա դա ազերի-թուրքերի հերթական աչքակապությունն էր, անտեղյակ մարդկանց բյուրիմացության մեջ զցելու պարզունակ խաբկանք: Որովհետեւ 1980-ական թթ. պարսկական խամների եւ նրանց վեզիրների համար Շուշիում, Ադրաամում ԼՂԻՄ-ի բյուջեի հաշվին կառուցված բետոնե դամբարանների եւ հայատյաց «գորշ գայլերի» խրախճանքի գիշերային տների վրա ծախսված 4,5 մլն. ռուբլին գրչի մի հարվածով վերագրվել է իբրեւ Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրման եւ վերականգնման վրա ծախսված «հսկայական գումար»: Այսպիսով, կաղապարվեց հերթական հրեշավոր սուտը, կեղծիքը եւ ներկայացվեց որպես հզոր կռվան՝ վկայելու, որ իրենք՝ ազերի-թուրքերը անձնագոհ նվիրվածությամբ հալումաշ են լինում Արցախի հուշարձանները վերականգնելու եւ պահպանելու համար: Հետեւապես հարկ չկա անհանգստանալու, քանի որ իրենք ոչինչ չխնայելով ամեն ինչ անում են: Ասպարեզ նետելով այս ռոնացող կեղծիքը, Բաքուն համոզված էր, որ այն ստուգող, բաց-հայտող չի լինելու եւ պետական մակարդակով կաղապարված ճշմարտանման աչքակապությանը մարդիկ հավատարու են եւ իրենք, ինչպես միշտ, քարոզչության պայքարում, թեկուզ որոշակի ժամանակով հաղթանակով են դուրս գալու:

Վերջին տարիներին Ադրբեջանի քարոզչական մեքենան «խորապես մտահոգություն» է հայտնել այսպես կոչված «օկուպացված», իրականում տեւական գերությունից ազատագրված Արցախի հայկական պատմական տարածքներում «հայերի կողմից յուրացվող, ոչնչացվող ադրբեջանական ժողովրդին պատկանող հուշարձանների» ճակատագրի մասին: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ հերթական սադրանք, քաղաքական պրովոկացիա: Ադրբեջանցիների կողմից ասպարեզ հանված կեղծ «փաստարկները» ներկայացվել են ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, աշխարհի շատ երկրների մշակույթի նախարարություններ, հեղինակավոր թերթերի խմբագրություններ եւ միջազգային այլ կազմակերպություններ: Մի խառնով ազերիները պետականորեն թմբկահարում են «ադրբեջանական մշակույթի ժառանգության 500 հուշարձանի» հայերի կողմից «յուրացման ու ոչնչացման» մասին: Նախ այդ թիվը ինչպես իրավացիորեն գրել է Լեռնային Ղարաբաղի հանրապետության հուշարձանների պահպանության եւ ուսումնասիրության վարչության պետ Ս.Սարգսյանը, ակնհայտորեն չի համապատասխանում իրականությանը, որովհետեւ տարիներ առաջ Ադր. ԽՍՀ կառավարության վերահիշյալ որոշումներով այդքան հուշարձաններ չեն ընդգրկված պետության կողմից հաշվառված հուշարձանների

ցուցակներում: Բացի այդ, տարիներ առաջ նշված տարածքների հուշարձանները ազերի-թուրքերը պաշտոնապես ներկայացրել էին որպես «ալբանական զամուկներ» և դրանք այժմ արդեն «ադրբեջանական մշակույթի հուշարձաններ» են հորջորջվում: Հավանաբար, այս պարագայում էլ ազերի-թուրքերի պետական ու քաղաքական գործիչները առաջնորդվել են «սուտը, կեղծիքը ինչքան մեծ լինի, այնքան դրան կհավատան» սկզբունքով: Հետո էլ, անկասկած հետապնդվում է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետություններին վարկաբեկելու նրանց փափագը: Ինչ վերաբերում է մշակութային արժեքների «յուրացմանը», ապա հայը դրա կարիքը երբեք չի զգացել: Յուրացումը, գորությունը, թալանը թուրքերի կենցաղի, զբաղմունքի հիմնական բաղադրիչ մասերից են՝ վկայված եվրոպական բազմաթիվ հեղինակների (այդ թվում նաեւ Կ. Մարքսի) կողմից:

Մյ ընդի տարի առաջ ազերի-թուրքերը նույնպես հարայ-հրոց էին բարձրացրել Շուշիի այսպես կոչված հայերի կողմից ադրբեջանական հուշարձանների ավերման մասին: Ժամանակին հայկական կողմը համապատասխան մերկացնող փաստաթղթերի հետ ՅՈՒՆԵՍԿՕ-ին է ուղարկվել 35 լուսանկար:

Քայքայվող Խորհրդային Միության մայրամուտին, Ադրբեջանի բռնապետության ճիրանների տակ գտնվող ղարաբաղցիները, մշտապես, մարդավայել ապրելու իրավունքից զրկված, փորձեցին վերականգնել իրենց պատմական իրավունքները: Ինչպես Ադրբեջանն այլեւս չէր կարողանում ընդունել խորհրդային ժառանգությունը եւ հեռացավ ԽՍՀՄ-ից, այնպես էլ Լեռնային Ղարաբաղը չէր կամենում այլեւս ապրել այն պայմաններում, որ կամայականորեն պարտադրվել էին Ստալինի կողմից տասնամյակներ առաջ:

Ներկայումս Ադրբեջանն ամեն կերպ փորձում է վերահաստատել իր կարգերն ու իշխանությունը Արցախի ժողովրդի վրա, որն արդեն 14 տարի է, ինչ հրաժարվում է ենթարկվել իր վստահությունը չվայելող ատելի իշխանությանը: Դեռ թարմ են թուրք-ազերիների կատարած վայրագությունների ցնցող հետքերը: Յավոք, արդեն անդառնալիորեն ոչնչացվել են հազարավոր հուշարձաններ, ավերվել հարյուրավոր բնակավայրեր, ջարդվել, փշրվել տասնյակ հազարավոր մահարձաններ, խաչքարեր, որովհետեւ, ինչպես ասել է Վ. Հյուգոն, այս երբեմնի ծաղկուն հայկական երկրամասով «թուրքերն են անցել»:

Լեռնային Ղարաբաղը դեֆակտո արդեն վաղուց որոշել է իր ճակատագիրը եւ անարդար է, եթե չասենք ոճրագործություն, ցանկացած ձեռով այն վերադարձնել խորթ, կեղեքիչ պետությանը: Ղարաբաղի հայ բնակչության անկախությունը, ԼՂՀ-ի հռչակումը Արցախի ազատագրական հզոր պայքարի օրինաչափ արդյունքն են: Այս տեսանկյունով

կարելի է ամենայն ոլորտակիրներն ասել, որ ԼՂՀ հռչակումը հանդիսացել է XX դ. վերջում ազգային հարցի լուծման խորհրդանշանը:

Արդեն եկել է ժամանակը, որ վերականգնվի Լենին-Աթաթուրք գործարքի արդյունք, մասնատված պատմական Արցախի ամբողջականությունը՝ իր նախկին սահմաններով: Այսինքն, այն շրջաններով, որոնք նրանից անջատել, պոկել, խլել են սովետական ազգերի-թուրքերի համար XX դ. 20-ական թթ., եւ որոնց մի զգալի մասն Արցախի ազատագրական բանակի կողմից արդեն ազատագրված է:

## 1. ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԴԱՏՊԱՆՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՍԴԱՐԵԶՈՒՄ ՈՒ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՅԱԽՈՒՄ

## 2. ԱՎԱՐԱՅՐԻ ՆԱՎԱՏԱԿՆԵՐԻ ՆՈՒՇԱՏԱԿԸ ՆԱՎԵՐԺԱՅՆՈՂ ՆՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐՆ ԱՐՅԱԽՈՒՄ

*(Մելանյա Բալայան, Արցախի պետական  
պատմաեթնոգիտական թանգարանի տնօրեն)*



Հավանաբար շատերն են բազմիցս լսել կամ կրկնել, որ թանգարանը մեր դեմքն է, մեր կենսագրությունը, մեր պատմության կանգուն պահապանն ու գիտամշակութային կարևոր օջախը: Եվ դրան անառարկելիորեն համաձայնվել են բոլորը, որովհետև ասվածը լրիվությամբ համապատասխանում է իրականությանը, որովհետև հենց այստեղ են հավաքագրվում ու պահպանվում մեր ժողովրդի հոգևոր ու նյութական մշակույթի գանձերը՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը: Եվ պատմության ու մշակույթի այդ գանձերը նույնպես դասվում են մեր ակունքները

մատնանշող հուշարձանների շարքը:

Պատմության և մշակույթի հուշարձանների գիտական ուսումնասիրության ասպարեզում յուրօրինակ տեղ ունեն թանգարանները, քանի որ նրանց կարևորագույն հիմնախնդիրներից մեկն էլ հանդիսանում է բնության և հասարակության զարգացումը բացահայտող երևույթների ու իրերի նյութերի ուսումնասիրությունը:

Թանգարանների գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունները բնորոշվում են մի կողմից՝ որոշակի գիտական ճյուղի պատկանելությամբ, մյուս կողմից՝ գիտահետազոտական ինստիտուտների շարքում թանգարանի դիրքով: Որպես կանոն, պատմության թանգարանների գիտահետազոտական կարևորագույն ուղղությունը պատմական գիտությունների ուսումնասիրությունն է. հիմնականում պատմամշակութային արժեքների, այն է պատմական հուշարձանների գիտական հետազոտությունների շնորհիվ: Հենց այս հանգամանքն էլ հանդիսանում է պատմության թանգարանների որպես գիտահետազոտական հիմնարկության առանձնահատկություններից մեկը:

Արցախի պետական պատմաերկրագիտական քանդարանը իր գործունեության ընթացքում առաջնորդվում և իրականացնում է քանդարանային գործունեությանը բնորոշ պլանային հիմնախնդիրները: Սակայն հարկ է նշել, որ քանդարանը իր ընդհանուր գործունեությամբ հանդերձ ունի նաև որոշ առանձնահատկություններ:

Նախ և առաջ նրա առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ ԼՂՀ-ում առայսօր չեն գործում գիտահետազոտական ինստիտուտներ, ինչպես օրինակ, հնագիտության, ազգագրության, արվեստի և այլն: Նման պայմաններում, բնականաբար, քանդարանը պետք է հնարավորինս չափով իր վրա վերցնի նաև հիշյալ ինստիտուտների պարտականությունները: Արցախում հայտնաբերված կամ հայտնաբերվող արցախահայ կամ համաշխարհային մշակույթին պատկանող պատմական, գիտական, գեղարվեստական և այլազան մշակութային արժեք-հուշարձանները այսօր հիմնականում կենտրոնացվում են հենց Արցախի պետական պատմաերկրագիտական քանդարանում: Այս համակենտրոնացումը, ինքնըստինքյան, պահանջում է լուրջ և համակողմանի գիտական մոտեցում ու միաժամանակ մեծ պատասխանատվություն: Եվ այս ամենով պայմանավորված, Արցախի պետական պատմաերկրագիտական քանդարանը պետք է իրավամբ դառնա երկրամասի գիտական կենտրոնը բառի իսկական իմաստով:

Սակայն ճշմարտությունը պահանջում է խոստովանել նաև, որ ներկա պայմաններում քանդարանը տակավին չի ստանձնել հիշյալ դերը մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների բացակայության պատճառով: Նախ և առաջ, քանդարանը չունի գիտահետազոտական ուսումնասիրությունների համար շատ քե քիչ բավարար աշխատանքային գոտի՝ գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումներով աշխատասենյակներ, գիտահրատարակչական ծառայություն, պրոբլեմային հիմնահարցերի գիտական լայն քննարկումների համար հատուկ սրահ, որը միաժամանակ կծառայի գիտական նորությունների մասսայականացման կամ քննարկման համար հատուկ դասախոսությունների անցկացմանը և այլն:

Գիտական հաստատությունների շարքում, քանդարանի, որպես գիտական օջախի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ հոգևոր ու նյութական հուշարձանների պահպանության հիմնախնդիրն է, որը կազմում է քանդարանների գոյատևման ու գործունեության հիմնական առանցքը: Ակնհայտ է, որ պատմության և մշակույթի հուշարձանները հանդիսանում են պետության սեփականությունը և մշտապես իրենց ուրույն տեղն ու դերն ունեն պետական զանձարանում: Այս գիտակցությամբ էլ պետք է ցուցաբերվի համապատասխան պետական մոտեցում, այսինքն՝ պետք է ստեղծվեն անհրաժեշտ բոլոր պայմանները

իլ քանդարանային ֆոնդերի հետագա զարգացման, եղած ֆոնդերի անխաթար պահպանման համար:

Տարաբախտաբար ստիպված ենք նշելու նաև, որ ներկա դրությամբ տիտոր իրավիճակ է տիրում Արցախի պետական պատմաերկրագիտական քանդարանի ֆոնդերում, էլ չենք խոսում շրջանների քանդարանների ֆոնդերի վիճակի մասին: Արցախի պետական պատմաերկրագիտական քանդարանը առայսօր չունի ֆոնդային պահպանության պահանջներից բխող համապատասխան տարածք:

Ելնելով քանդարանի ֆոնդի իրական վիճակից և դեկավարվելով ֆոնդային աշխատանքին ներկայացվող ընդհանուր պահանջներով ու խնդիրներով, մենք պետք է դրանց լուծման ուղիները որոշելիս ելնենք ստույգ պայմաններից ու հնարավորություններից: Կարծում ենք ներկա դրությամբ Լեռնային Ղարաբաղի քանդարաններում կենտրոնացված հոգևոր ու նյութական հուշարձանների, որպես մեր ազգային ժառանգության մի մասի հետագա պահպանության և ուսումնասիրության, ինչպես նաև հիշյալ գործընթացի աստիճանական զարգացման ուղիները պլանավորելիս հարկ է ամեն մի առանձին դեպքում ելնել առաջին հերթին քանդարանի առանձնահատկություններից, պահանջներից և, որ շատ կարևոր է, հնարավորություններից: Որովհետև հայտնի են դեպքեր, երբ քանդարանները, դեռ ընթացիկ, կարևոր խնդիրները չլուծած, ձեռնամուխ են լինում մեծ հնարավորություններ, միջոցներ և ջանքեր պահանջող աշխատանքների, առանց հաշվի առնելու սեփական ստույգ հնարավորությունները և քանդարանի ֆոնդի իրական վիճակը: Արցախի պետական պատմաերկրագիտական քանդարանի առջև ծանացած գլխավոր ու առաջնահերթ խնդիրները ժամանակակից էտապում հետևյալներն են.

1. Թանգարանային հավաքածուի զարգացումը,
2. Թանգարանային ֆոնդի անվթար պահպանման ապահովումը,
3. Պատմության և մշակույթի հուշարձանների բազմակողմանիորեն՝

գիտական և հասարակական օգտագործման համար պայմանների ստեղծումը:

Ինչպես ասում են «պահել ժառանգությունը բոլորովին չի նշանակում սահմանափակվել ժառանգությամբ»:

Եվ ինչպիսի պայմաններում էլ գտնվի քանդարանը այնուամենայնիվ նրա առաջնահերթ խնդիրներից առաջինը քանդարանի հարստացումն ու համալրումն է նյութական ու հոգևոր հուշարձանների նոր հավաքածուներով:

25-րդ դարը հայոց պատմության մեջ բնութագրվեց որպես քաղաքական արհավիրքների դար: Սասանյանները նպատակ էին դրել վերջնականապես իրենց ենթարկել Այսրկովկասը, այն դարձնել պարսից տերության մի մասը, վերացնել նրա տնտեսական, քաղաքական և մշակութային ինքնությունը: Եվ այդ նպատակի իրագործման առաջին քայլերից մեկը եղավ ինքնություն պետականության վերջնական տապալումն ու մարգալանությունների ստեղծումը:

428թ. Հայաստանում վերացվեց թագավորությունն ու ստեղծվեց մարգալանություն՝ սկզբում նախարարական իրավունքների որոշակի պահպանմամբ, ապա սկսեցին կիրառվել նաև այդ իրավունքների վերացմանն ուղղված միջոցառումներ: Հիշյալ միջոցառումների թվում էր եկեղեցուն և հոգևորականությանը հարկատու դարձնելը: Անվիճելի փաստ է, որ պետականության կործանումից հետո Հայոց եկեղեցին մնում էր որպես միակ համագային կենտրոնացնող իշխանությունը և պատահական չէր, որ «պարսկական կառավարությունն ամենից շատ այս հիմնարկությունից էր երկյուղ կրում, և հասկանալի է, որ պլախի օգտվելի հարմար առիթից՝ նրան մահացու հարվածներ հասցնելու համար»<sup>1</sup>:

Պարսկաստանի կողմից իրականացված վարչական նոր վերաբաժանման հետևանքով Հայաստանից անջատվեցին և Աղվանքի մարգալանությանը միացվեցին Արցախ և Ուտիք նահանգները և Աղվանքի հարավային սահմանը հասցվեց մինչև Արաքս գետը<sup>2</sup>: Հ.Սվազյանի հավաստմամբ՝ այն կատարվել է 461 թվականին՝ Վաչե 2-ի գահից հեռացվելուց հետո: Նույն տեսակետն է առաջ քաշում նաև Բ.Հարությունյանը<sup>3</sup>:

Բննարկվող ժամանակաշրջանում ձախափնյա բուն Աղվանքում ապրող ցեղերը ապրում էին առանձին-առանձին և չունեին կայուն քաղաքական միավոր: Այս հանգամանքից օգտվելով Հայոց արևելից կողմանց՝ Արցախի և Ուտիքի Վաչե Բ Առանշահիկ թագավորը պարսից Պերոզ թագավորի հովանավորությամբ կառուցում է Պարտավ քաղաքը՝ Ուտիք նահանգի Ուտի-Առանձնյակ գավառի ստորին մասում՝ Թարթառ գետի ձախափնյա և հյուսիսցիների ավերիչ արշավանքներից պաշտպանությունն ապահովելու համար այն պարսպապատում ու իր աթոռը տեղափոխում է այնտեղ, այնուհետև իր իշխանությունը տարածելով նաև Կուրի ձախափնյակի վրա:

Եվ այսպես, Ուտիքի, Արցախի և Կուրի ձախափնյա շրջանների

1 *Լեո, հ.2, էջ 13:*

2 Հ.Սվազյան, *Աղվանից մարգալանության կազմավորման հարցի շուրջը ՊԲՀ, Եր., 1979, հ.2, էջ 213:*

3 Բ.Հարությունյան, *Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կազմությունը 387-451թթ., Բանբեր Երևանի համալսարանի, 1976, հ.2, էջ 92:*

քաղաքական կյանքը իրենց ձեռքը վերցրած Առանշահիկները՝ Վաչե Բ թագավորի գլխավորությամբ, կազմակերպեցին հակապարսկական շարժում հիշյալ տարածաշրջանում:

Պարսկաստանը վերջնական նպատակին հասնելու համար Հայաստան ուղարկեց իր կանոնավոր զորաբանակը: Հայրենիքի ու եկեղեցու պաշտպանության համար հայերի կողմից մղված հերոսամարտը տեղի ունեցավ 451թ. մայիսի 26-ին, Ավարայրի դաշտում, որտեղ Վարդան զորավարի բանակում թև-թևի տված կռվել են նաև Արցախի զինվորականները Բակ Առանշահիկ իշխանի գլխավորությամբ, իրենց նվիրական արյունը հեղելով հանուն հավատքի ու ազգի ազատության:

Ավարայրի ճակատամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության անմոռանալի էջերից է, նախ և առաջ այն իմաստով, որ այն իր մեջ ներառում էր նաև գաղափարական անձնագոհություն. «Ավարայրի դյուցազնամարտում դրսևորվեց հայ ժողովրդի միասնական, անխորտակելի կամքը, արխության ոգին, ազատասիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը»<sup>4</sup>: Ս.Ղևոնդաց և Ս.Վարդանանց պայքարը հաստատեց ինքնություն եկեղեցի և անկախ պետականություն ունենալու համար մաքառող հայ ժողովրդի ապրելու իրավունքը:

Ավարայրի հերոսամարտում գոհված հայորդիները դասվել են «հայրենիքի նահատակներին» շարքը, սրբացվել ու դարձել հայրենիքին անմնացորդ ծառայելու պայծառ օրինակ: Այսօր էլ «Վարդանանց տունը» համազգային տուն է, որ նշվում է ամենուրեք՝ թե հայրենիքում և թե սփյուռքում<sup>5</sup>: Երվանդ Լալայանի տվյալներով դարի սկզբներին այն տոնվում էր նաև Գանձակի գյուղերում<sup>6</sup>:

Ավարայրի նահատակների անունները հավերժացնող բազմաթիվ սրբավայրեր են կառուցվել Հայոց աշխարհի տարբեր վայրերում, այդ թվում նաև Արցախում:

Արցախի հայությունը սրբությամբ է պահպանել Ավարայրի բոցաշունչ ոգու՝ Ղևոնդ Երեցի հիշատակը: Վարանդայի Ավետարանոց, Մարգասաչեն, Վերին Թաղավարդ և Մոշխմիատ գյուղերի կենտրոնում, բարձր սարի գագաթին վեր է խոյանում Սուրբ Ղևոնդա անապատը կամ Ղևոնդիկ վանքը: Եկեղեցուն պահպանվում է Ղևոնդի պատկերը: Այս բնակավայրերի ծերերը ժամանակին Մարգիս եպիսկոպոս Ջալալյանցին ասել են, թե Ս.Ղևոնդ երեցի և մյուս նահատակ հայերի նշխարները բերել ամփոփել են այդտեղ և կառուցել եկեղեցի<sup>7</sup>: Եկեղեցուն մի

4 *Էջմիածին, ամս., 1961, Բ, էջ 9:*

5 *Shu' C.Еремян Народно-освободительная борьба армян против персов в 450-451гг. ВДН, 1951, No 4.*

6 Ե. Լալայան, *Երկեր 5 հատորով, հ.2, Եր., 1988, էջ 449:*

շարք մասունքների հետ պահպանվում է Ղևոնդյանց մասունքները մի արծաթե միջակ խաչում: Այստեղ հարկ է նշել, որ այն ժամանակների բարքերին բնորոշ էր նահատակված քրիստոնյաների մասունքների առուծախը: Ղազար Փարպեցին հաղորդում է, որ մի քրիստոնյա խուժիկ առևտրական, որն առևտրական գործերով լինում էր Հայաստանի քաղաքներում և խոսում հայերեն, ակնատես է լինում Ղևոնդ Երեցի և մյուս եկեղեցականների սպանություններին և նրանց ոսկորներն, իբրև մասունքներ, հանձնում է Պարսկաստանի քրիստոնյա համայնքներին, մի մասն էլ բերում Հայաստան:

Հաղյուքի շրջանի ծայրամասային Ամուտուկ (հետագայում՝ Թեախարաք) գյուղի եկեղեցին կոչվում է Վարդան Ջորավարի անունով: Այդ եկեղեցում, որպես սրբություն, պահվում է սևագույն քար, որն ըստ ավանդության ներկված է սուրբ Վարդանի արյամբ<sup>8</sup>: Վարդան զորավարի անունով մեկ ուրիշ մատուռի ավերակներ գտնվում է Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղում: Սարգիս Ջալալյանցը գրել է. «Մուշկապատցիք ունեն զքարաշեն եկեղեցի, առ որով է մատուռն սուրբ Վարդան նահատակի, ուր յաճախեն ուխտատուք բազումք»<sup>9</sup>:

Այսօր Ս.Ղևոնդյաց և Ս. Վարդանանց հաղթական դրաշխ վերստին իր սուրբ ձեռքերում է պահում Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, իր բոլոր թեմերով հանդերձ և նրանց թվում նաև Արցախյան վերաբացված թեմը: Ս.Ղևոնդյանց եկեղեցական ուխտապահության գիտակցությունը և Ս.Վարդանանց հայրենասիրական ոգին շարունակաբար ապրեցին հայ հոգիների անդաստանում և անհրաժեշտության դեպքում վերստին կրկնվեցին հետագա բոլոր դարերում մինչև այսօր:

7 Ա.Ղալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 229: Տես նաև՝ Ե.Լալալյան, նույն տեղում, էջ 40:

8 Խ.Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ.Ա, Եր., 1931, էջ 314:

9 Սարգիս եպիս. Ջալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Բ, էջ 339:

## ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՆԱՐՅԵՐԻ ԵՎ ՆՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԴՐՎԱԾՔՆ ԱՐՅԱԽՈՒՄ

(Մլավա Մարգսյան, հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության պետ)



Հարգելի ընկերներ, տիկնայք և պարոնայք: Իմ ելույթը բաղկացած է երկու մասից, և, նախքան բուն թեմային անդրադառնալը, հարկ եմ համարում համառոտակի ներկայացնել հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության կառարած աշխատանքները վերջին երկու տարում: Այո՛, հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչությունն Արցախում ստեղծվել է շուրջ երկու տարի առաջ, և, իմ կարծիքով, արվել է հնարավորը ներկայիս սուղ ու դժվարին պայմաններում: Այսպես, վերահաշվառել ենք Մարտակերտի շրջանի և Ստեփանակերտ քաղաքի հուշարձանները, ընդ որում, Մարտակերտում դրանց թիվը կառավարության կողմից հաստատված 229-ից հասցվել է շուրջ 1200-ի: Պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձանների պահպանության նկատառումներից ելնելով, կազմվել են պայմանագրային ձևեր, այսպես կոչված պահպանական պարտավորագրեր, որոնք օգտագործվում են այս կամ այն հուշարձանի պահպանության գործը օրենսդրական ճանապարհով կարգավորելու համար: Օրինակ, Խոջալուի օդանավակայանի ղեկավարության հետ կնքվել է պահպանական պարտավորագիր՝ օդանավակայանի տարածքում գտնվող դամբարանադաշտի պահպանության համար:

Պատմական հուշարձանների, ինչպես նաև բնության և կենդանական աշխարհի պահպանության բարելավման նկատառումներից ելնելով, կազմել ենք ծրագրեր՝ Արցախում կազմակերպելու-ստեղծելու «Խաչեն» և «Դիզակ» բնապատմական և «Շուշի» պատմա-մշակութային արգելոց-թանգարաններ:

Իրականացրել ենք պեղման-ուսումնասիրման աշխատանքներ Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղում, առաջմ 200 հուշարձանի համար պատրաստվել են ցուցատախտակներ (երեք լեզուներով), ընթացքի մեջ են դրանց տեղադրման աշխատանքները:

Որոշակի հաջողություններ են արձանագրվել հուշարձանների նո-

րոգման-բարեկարգման ասպարեզում: Գահրավ գյուղում ավարտվել են Բաֆֆու հուշարձանի վերակառուցման, Հացի գյուղում՝ Բռնի եղու որմնափակ հուշակոթողի նորոգման-ամրակայման, Կոլարձիի «Թարգմանչաց» վանքի արտաքին նորոգման աշխատանքները: Միաժամանակ իրականացվել են մի շարք՝ առավել անմխիթար վիճակում գտնվող, պատմական գերեզմանոցների բարեկարգման-ցանկապատման աշխատանքներ (օրինակ, Նախիջևանի կի Փրոմյանների տոհմական, Խնապատի IX-XX դդ պատմական և Շուշիի հյուսիս-արևելյան եզրի գերեզմանատները):

Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի կապակցությամբ, կազմվել են 12 գրքույկների և բուկետների տեքստեր՝ համապատասխան լուսանկարներով, տպագրվել է «Ասկերանի բերդ» գրքույկը, տպագրության ընթացքում են իմ հեղինակությամբ «Խաչենի ամրոցները», «Խնապատ» գրքերը, ՇԻՍԿոտջյանի «Վանդալիզմ կամ ինչպես էին քուրքերը պահպանում հայկական-քրիստոնեական հուշարձանները Արցախում» փաստաթղթերի անգլերեն թարգմանությամբ ժողովածուն, Հ.Հարությունյանի «Շուշի. նորահայտ նյութեր քաղաքի պատմության մասին» գրքույկը և այլն:

Հարգելի ընկերներ, Արցախում, ներառյալ ազատագրված տարածքները, այսօր պահպանության տակ են առնված շուրջ 10000 հուշարձաններ, որոնք ամենօրյա ուշադրության և հսկողության կարիք ունեն: Լ.Գ.Հ իշխանությունները լիազորել են մեզ՝ Մշակույթի նախարարությանը՝ պահպանել մեր ազգային արժեքները՝ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Այլ խաբով, պետությունը ստեղծել է վարչություն, մշակել օրենք հուշարձանների պահպանության մասին և հանձնարարել մեզ, որպեսզի առաջնորդվելով այդ օրենսդրական ակտով, իրականացնենք հուշարձանների պահպանության գործը: Եվ ոչ-ոք իրավունք չունի՝ առանց այդ գործի հիմնական տեր ու տնօրեն Մշակույթի նախարարության գիտության ու համաձայնության, ոտնձգություններ կատարել հուշարձանների նկատմամբ, զբաղվել ինքնագործունեությամբ, կամայականությամբ, ոչ-ոք իրավունք չունի անտեսել օրենքը, ուրը պետք է լինի հավասար բոլորի համար՝ անկախ զբաղեցրած դիրքից:

Օրենքի 30-րդ հոդվածում գրված է. «հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքներն իրականացվում են լիազորված մարմնի բույլտվությամբ և վերահսկողությամբ», ընդ որում, լիազորված մարմնի հետ նախօրոք համաձայնեցվում են աշխատանքների նախագծային առաջադրանքներն ու նախագծերը: Սակայն, հուշարձաններ վերականգնող կազմակերպություններից Լ.Գ.Հ տարածքում, առայժմ Արցախի թեմն է խախտում այս կարգը, որոնք դրսևորվում են հուշարձանի նախնական տեսքն աղճատող նորոգումներ:

յով: Նախորդ ելույթներից մեկում բավականին փաստեր բերվեցին: Դրանք, իհարկե, տեղի չէին ունենա, եթե այդ աշխատանքներն իրականացնեին «մասնագիտացված կազմակերպությունները և այն մասնագետները, որոնք ունեն համապատասխան լիցենզիա և տվյալ հուշարձանում աշխատանքներ կատարելու համար սահմանված կարգով տրված թույլտվություն» (հոդված 32): Դուք ինձ հարց եք տալիս, թե ես տեղյակ եմ արդյոք, թե ինչ է կատարվում Գանձասարի շրջակայքում և ո՞վ է այն թույլատրել: Միանգամից պատասխանում եմ, որ այդ աշխատանքներն իրականացնելու համար մեզ հետ ոչ-ոք չի խորհրդակցել: Չի եղել լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված գրավոր համաձայնություն կամ թույլտվություն:

Վանքի մոտ կատարվող շինարարության մասին զարմանալիորեն իմացել եմ Երևանում: Հայաստանի հուշարձանների պահպանության վարչության պետը ինձ մատնացույց է արել շինարարությունը պատկերող մի լուսանկար և հարցրել, թե արդյո՞ք տեղյակ եմ այդ ամենի մասին: Ես տեղյակ չեի, քանի որ աշխատանքները սկսվել էին նախքան իմ վարչության պետ նշանակվելը և Արցախում տիրող ընդհանուր իրավիճակին նոր էի ծանոթանում: Պարզվեց, որ մի արտասահմանցի է ֆիլիսել շինարարությունը, այն ներկայացրել ՀՀ հուշարձանների պահպանության վարչություն՝ որպես արտառոց փաստ, քանզի շինարարությունն իրականացվում էր հուշարձանի պահպանության գոտու տարածքում: Վերադառնալով Ղարաբաղ, անմիջապես սկսեցի զբաղվել այդ հարցով, պարզելու համար շինարարության հետ կապված հանգամանքները: Սկզբում դիմել եմ Մարտակերտի վարչակազմի մշակույթի բաժնի վարիչին՝ ինձ նախնական տեղեկություններ հաղորդելու համար, որը սակայն հրաժարվել է, ասելով, որ ինքը «դանոսչիկ» չէ և տեղեկություններ չի կարող տալ:

ՊՄՊ Արցախի ծառայության պետ Ջ.Թադևոսյանի հետ միասին եղանք Գանձասարում: Պարզվեց, որ աշխատանքների ընթացքում տեղահան են արվել ոչ միայն գերեզմաններ, այլև հնագիտական առանձին հուշարձաններ: Նման դեպքերում աշխատանքներ կատարող կազմակերպությունը պարտավոր էր գոնե անհապաղ հայտնել լիազորված մարմնին՝ տվյալ դեպքում Մշակույթի նախարարությանը, որը սակայն չի արվել: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում (հոդված 21) գրված է. «Հուշարձանների քանդումը արգելվում է: Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը... փոփոխումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության թույլտվությամբ... Հուշարձանների տեղափոխման և փոփոխման

թուլտվոթյուն տրվում է միայն լիազորված մարմնի եզրակացության հիման վրա: Նախքան հուշարձանը տեղափոխելը կամ փոփոխելը... լիազորված մարմինը կազմակերպում է հուշարձանի գիտական ուսումնասիրման, չափագրման և յուսանկարման աշխատանքները»:

Տվյալ դեպքում այս պահանջներից և ոչ մեկը չի կատարվել:

Որոշ պարզաբանումների համար եղանք Շուշիում, նպատակ ունենալով հանդիպել Պարզ Արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, որը սակայն տեղում չէր: Հանդիպեցինք Կոբյուն անունով մի հոգևորականի: Իմ այն հարցին, որ ճի՞շտ է այդպե, որ Գանձասարում գերեզմաններ են քանդվել, նա պատասխանեց, որ «այո՛, ճիշտ է»: Բայց չէ՞ որ դրանք հուշարձաններ են, - ասացի ես: Հոգևորականի վրա «հուշարձան» բառը լավ տպավորություն չբողեց: «Գերեզմանն ի՞նչ հուշարձան: Դրանք բոլորը պետք է քանդվեն-վերացվեն: Վանքերի մոտ ոչ մի գերեզմանոց էլ չպիտի լինի», - ասաց նա: Եվ այդ ամենը մի քանի հոգու ներկայությամբ: Կարծում եմ, մեկնաբանություններն ավելորդ են:

Հարգելի ընկերներ, ոչ-ոք իրավունք չունի շրջանցել օրենքը և այն վերածել ձևական փաստաթղթի: Ոչ-ոք իրավունք չունի ձևավորել-աղճատել պատմական հուշարձանը, որի նախնական տեսքը պետք է պահպանվի: Պետք է վերջ տալ հուշարձանները քիթեղապատելու գործընթացին՝ որպես նորոգման ընտրված հեշտ ձև: Ավարտելով խոսքս այս հարցի հետ կապված, ուզում եմ հիշեցնել, որ ոչ մի տարբերություն չի կարող լինել պատմության աղավաղման, խեղաթյուրման և հուշարձանների նորոգման ժամանակ թույլ տրված աղավաղումների ու աղճատումների միջև:

Ի պատասխան Ձեր հարցման, ես ստիպված էի ելույթս սկսել նորոգման աշխատանքների դրվածքից: Իսկ ի՞նչ կարելի է ասել մյուս բնագավառների մասին:

Ստուգումները ցույց են տվել, որ տեղերում անբավարար է հսկողությունը հուշարձանների նկատմամբ, որի արդյունքում անդառնալի վնասներ են հասցվում մեր նախնիների թողած պատմա-մշակութային ժառանգությանը: Ինչպես նախկինում, այսօր էլ գրանցվում են դեպքեր, երբ հնավայրերից խաչքարեր են տեղափոխվում և տեղադրվում բնակավայրերում, ճանապարհամերձ հատվածներում, աղբյուրների վրա՝ աղավաղելով պատմությունը: Նման փաստեր են արձանագրվել Արցախի մի շարք բնակավայրերում: Օրինակ, Ուլուբարից կամ Սեյդիչենի մոտակա հանդամասերից խաչքարեր են տեղափոխվել Սեյդիչեն, Սարդարաշենի Կոյրեն-Յրտաջուր վայրից Կորագյուղ են փոխադրվել շուրջ մեկ տասնյակ հուշակոթողներ և այլն:

Յուրաքանչյուր հուշարձան պետք է մնա, պահպանվի իր նախնական տեղում՝ պատմական միջավայրում: Օրենքով արգելված են այլ վայրերից հուշարձանների տեղափոխումները, որը, նորից եմ կրկնում,

աղավաղում է մեր պատմությունը: Ներկայումս կազմվում է տեղահանված-տեղափոխված հուշարձանների ցուցակ՝ դրանք առաջիկայում իրենց նախկին վայրերը տեղափոխելու համար:

Արցախում գրանցվել են դեպքեր, երբ հուշարձանները օգտագործվում են այլ՝ անբույլատրելի ու անպատվաբեր նպատակներով: Օրինակ, առանձին եկեղեցիներ վեր են անձվել մարագների, որոշ հուշարձաններում անասուններ են պահվում: Վարչակազմերը, գյուղապետարանները պետք է խստիվ միջոցներ ձեռնարկեն նման երևույթները կանխելու համար:

Հարգելի ընկերներ, գանձախուզությունը կարծես թե մեծագույն չարիք է դարձել մեր իրականության մեջ: Գրեթե չկա մի վանական համալիր կամ հուշարձանախումբ, ուր ոտք դրած չլինեն ոսկի փնտրողները, որոնք գանձ գտնելու-հարստանալու մոլուցքով տարված, փորփորում են հուշարձանների հիմքերը, պղծում գերեզմանները: Հասկանալի է, որ խելքը գլխին մարդը նման գործերով չի կարող զբաղվել, քանզի գիտակցում է, որ հուշարձաններում, մասնավորապես քրիստոնեական կոթողներում, բացառվում է ոսկու առկայությունը, ուղղակի, նման սովորույթ չի էլ եղել մարդկանց հավատալիքներում: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գանձախույզները հիմնականում տխմար, անմակարդակ, առանձին դեպքերում՝ որոշակի շեղումներով մայրիկ են, որոնց եթե չհասկացնես, ի վիճակի չեն իմանալ հուշարձանի դերն ու նշանակությունը, ճանաչել այն, որպես ազգային արժեք: Մենք ներքին կարգով աշխատում ենք այդ ուղղությամբ և արդեն առանձին գյուղերում ի հայտ ենք բերել օրինագանցներին: Սակայն, այս գործում մեծ անելիքներ ունեն իրավապահ մարմինները, որոնք ցավոք, տեղերում մատնված են անգործության, քանզի առայսօր ոչ մի գանձախույզ չի բռնվել և պատասխանատվության չի ենթարկվել: Բայց չէ՞ որ նրանք մեր շարքերում են և հարկ եղած դեպքում ի հայտ բերելը այնքան էլ մեծ դժվարություն չի կարող ներկայացնել:

Վերջացնելով խոսքս այս հարցի հետ կապված, գտնում եմ, որ «գանձախուզություն» երևույթի դեմ պայքարը պետք է լինի միասնաբար ու անընդմեջ: Ընդ որում, պետք է փոխվեն պայքարի ձևերը, մասնավորապես, բնակավայրերում ակտիվացնելով դասախոսությունները բնակչության ու, հատկապես, մատաղ սերնդի շրջանում, որը, ինչպես ցույց է տվել փորձը, վատ արդյունք չի տալիս:

Հարգելի ընկերներ, հուշարձանների պահպանության բարելավման գործում մեծ առաջընթաց և արձատարական քեկում կարող է լինել միայն այն դեպքում, երբ բոլորը ուղեկցվեն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքով, որպեսզի հուշարձանների հետ կապված պե-

տական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններն իմանալին իրենց պարտականությունները և չզլանալին դրանք կատարել: Կարևոր է նաև հուշարձանների դերի ու նշանակության պրոպագանդային դպրոցներում, որպեսզի մատաղ սերունդը գիտակցի իրենց նախնիների թողած պատմական ժառանգության պահպանության կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ մանավանդ Արցախում:

Հարգելի ընկերներ, վերջին ժամանակներս Արցախում, Հայաստանում և նույնիսկ Ռուսաստանում ի հայտ են եկել տասնյակ մարտիկ, որոնք համապատասխան կրթություն չունենալով, զբաղվում են Արցախի պատմության հարցերով, գրում հոդվածներ, գրքեր և օգտվելով բնակչության անտեղյակությունից, հաճախ գիտակցաբար, գյուտ անելու մոլուցքով տարված, աղավաղում են մեր պատմությունը, փորձում է ժանազին շինծու գրվածքներով երևելի դառնալ հասարակության մեջ: Ոմանց թվում է, որ եթե իրենք հաջողությունների չեն հասել իրենց բուն մասնագիտությունների մեջ, կարող են զբաղվել պատմագրությամբ, որտեղ կարելի է հեշտությամբ իրենց դրսևորել և հայրենասերի համբավ ձեռք բերել:

Մենք միշտ էլ պայքարել, այսուհետ կպայքարենք բոլոր նրանց դեմ, ովքեր կփորձեն աղավաղել Արցախի պատմությունը և փաստացի նյութերով ցույց կտանք ճշմարտությունը, որպեսզի հենց իրենք համոզվեն, որ պատմությունը «Թաթունց բուստան» չի, որ ով ինչ ուզենա անի, այլ մի գործի գիտություն, որ հենվում է ոչ թե հեթիաբաբանությունների, այլ փաստերի, հավաստի աղբյուրների վրա: Եվ որպեսզի այս խոսքերը մերկապարանոց չթվան, խոսենք փաստերով:

Իմ ձեռքի տակ է մի ցուցակ, որտեղ նշված են մեկ տասնյակ հեղինակներ, որոնք աչքի են ընկել Արցախի պատմությունը կամ նրա առանձին դրվագները աղավաղելու ասպարեզում:

Լրագրող Լևոն Սկրտչյանի մասին շատ է խոսվել ու գրվել: Այդ անձնավորությունը վերջին 5 տարիների ընթացքում շուրջ երկու տասնյակ անգամ հանդես է եկել մամուլում, նույն բովանդակությամբ, հաճախ էլ նույն վերնագրի տակ տպագրելով նույն բանը Ստեփանակերտ քաղաքի մասին: Ահա նրա գրվածքների պատճենահանված օրինակները, որտեղ հեղինակը բամբախով շինծու, անհիմն ու հակագիտական փաստարկներով, ընդ որում, առանձին դեպքերում՝ գիտակցաբար, կարելի է ասել ազնիվ հայրենասերի դիմակով աղավաղում է քաղաքի պատմությունը, չարաշահելով մարդկանց, ժողովրդի անտեղյակությունը: Կարծում եմ հարկ չկա մանրամասն ներկայացնելու պարուն Սկրտչյանի՝ կարելի է ասել ծիծաղ առաջացնող բամբախով փաստարկները մի քաղաքի մասին, որը հազարամյակների պատմություն ունենալով, մեղմ ասած, արժանի չէ նման անհարգալից վերաբերմունքի:

Մյուս հեղինակը, որ հարկ են համարում ներկայացնել, Բակուր Կա-

րապետյանն է: Որպես լրագրող, արցախյան ազատամարտի տարիներին նա հանդես է եկել բազմաթիվ հրապարակումներով ու ռեպորտաժներով, որոնք այսօր պատմական մեծ արժեք են ներկայացնում: Մեծ է նաև նրա դերը այլ ասպարեզներում:

Վերջին ժամանակներս Բ.Կարապետյանը զբաղվում է պատմագրությամբ: Լավ էլ անում է: Յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում իր անելիքը: Բայց եթե պատմություն ես գրում, այն էլ՝ ճշմարտացի, պետք է կարողանաս անպայման փաստացի տվյալներով հիմնավորել քո ասելիքը, պետք է կարողանաս առաջնայինը տարբերել երկրորդականից, իրականը զատել հեթիաբաբանությունից: Դեռ ավելին, մտավորականը պետք է լինի ազնիվ, անգամ ի հոգուտ Արցախի չաղավաղի պատմությունը, քանզի Արցախը հարուստ պատմություն ունենալով, ինչպես գիտեք, դրա կարիքը երբևէ չի ունեցել:

Վերջերս Բ.Կարապետյանը հրապարակել է «Շուշի բերդաբաղաբը» գիրքը, որտեղ դժվար է ասել՝ սխալն է շատ, թե ճիշտը: Այս գրքում տեղ են գտել բազմաթիվ անճշտություններ, աղավաղումներ, ցավոք, առանձին դեպքերում՝ գիտակցաբար:

Միայն մի օրինակ. փորձելով ապացուցել, որ Շուշին XV և հետագա դարերում էլ հիշատակվում է պատմական աղբյուրներում, պարոն Կարապետյանը Շոշ գյուղի տվյալները վերագրում է Շուշին: Մատենադարանի ֆոնդերում պահպանվող 1428 և 1575թթ. ձեռագրերը, որ տեղ են գտել նշված գրքում, իրականում, Շուշի քաղաքի հետ որևէ առնչություն չունեն: Մատենադարանից գրի առնված ձեռագիրը Բ.Կարապետյանը ներկայացնում է հետևյալ կերպ. «Ի փառս նման գաւառս Վարդնթոց, ի գաւառս, որ կոչի Շուշոյ, ... Անդ հովանեաւ սուրբ Աստուածածնին: Գրեցաւ ի թվականութեանս Ռիդ» (1575):

Իրականում, պետք է լինի. «... ի Փոսանհանկ գաւառս Վարդնթոյ, ի գաւառս որ կոչի Շուշոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսիս ի հանգիստ սորա այրաւեր և ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին: Արդ, գրեցաւ ի թվիս Ռիդ» (1575):

Այսպիսով, նկատի ունենալով, որ նախկինում Շուշի քաղաքում եղել է Ս.Աստվածածին եկեղեցի, Բակուր Կարապետյանը Շոշ գյուղին վերաբերող այս արձանագրությունը վերագրում է Շուշի քաղաքին, գիտակցաբար արձանագրությունից դուրս թողնելով Սուրբ Ստեփանոս անվանումը, այլապես ընթերցողը կհասկանար, որ ձեռագրում նշված երկու եկեղեցիները գտնվում են Շոշ գյուղում և Շուշի քաղաքի հետ կապ չունեն:

Շուշին որպես բնակավայր (քաղաք, ամրոց) գրավոր աղբյուրներում հիշատակվում է առնվազն VI դարից, իսկ համաձայն հնագիտական ուսումնասիրությունների՝ մ.թ.ա. II-I հազարամյակից:

Արժե՞ արդյոք հիմնավոր ու մանրակրկիլ ուսումնասիրություն կա-

տարելու փոխարեն, կառչել փրփորներից և ինչպես ասում են՝ «ունքը շինելու փոխարեն, աչքը հանել»։ Յավալի է, որ այսօր նման աշխատություններն են հավակնում ինչ-որ պետական մրցանակների կամ փորձարկում ներկայացվել իբրև դոկտորական դիսերտացիաներ:

Հաջողդ հեղինակը բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանն է: Ես այդ անձնավորությանը մոտիկից չեմ ճանաչում, երբևէ չեմ շփվել նրա հետ, բայց մի քանի անգամ պատիվ եմ ունեցել բննադատության դիրքերից մոտենալ նրա առանձին գրվածքներին, մասնավորապես Կաղանկատույք բնակավայրի տեղադրության հետ կապված, որը շատ խիստ վրդովեցրել է Արցախում ճանաչում գտած մտավորականին: Եվ շատ իզուր: Ես, որ նրա տեղը լինելի, շատ հանգիստ, առանց այլևայրության կրնդունի առողջ դիտողությունը և ոչ թե սկզբունքային համառությանը հրաժարվելի ճշմարտությունից: Այն, որ Կաղարծին Կաղանկատույքը չէ, ապացուցվում է բազմաթիվ գրավոր փաստարկներով, որը սակայն պարոն Բեգլարյանը չի ցանկանում ընդունել: Կարծում եմ, դարձյալ այդ նույն չարաբաստիկ «սկզբունքից» ելնելով և դիտավորյալ:

Մամուլում եղած բննադատությունները չընդունելով, այսօր Բեգլարյանը նույն՝ Կաղանկատույքի տեղադրության հետ կապված հողվածք տպագրել է իր «Արցախնամե» գրքում, արևամարիելով ոչ միայն գրախոսներին, այլև այն բազում պատմական փաստերը, որոնք հիմք են ծառայել մերժելու Կաղարծին Կաղանկատույքը համարելու հեթիաբաբանությունը: Նման մտեցում ցուցաբերելով, պարոն Բեգլարյանը պարզ է, ոչինչ չի շահել: Նրա ո՛չ պատիվն է բարձրացել և ո՛չ էլ հեղինակությունը: Արցախի պատմությունն էլ ոչ շահել է և ոչ էլ տուժել, քանզի պատմական աղբյուրներով չհիմնավորված գրվածքները մնում են սոսկ մի թղթի կտոր և ուրիշ ոչինչ:

Օգտվելով առիթից, ես պարոն Բեգլարյանին կոչ եմ անում ողջախոսության:

Հարգելի Ընկերներ, ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ մեկ առ մեկ անդրադառնալ բոլորին, ցույց տալ նրանց սխալները: Ավարտելով խոսքս, գտնում եմ, որ պետք է վճռականորեն պայքարել Արցախի պատմությունը աղճատողների դեմ, որը պետք է լինի ոչ միայն սոսկ առանձին անհատների, այլ գիտական հիմնարկությունների, կազմակերպությունների միջոցով: Մենք պետք է միշտ հիշենք և նկատի ունենանք, որ այսօրվա սխալը, օրինակ, մամուլում լույս տեսած մի ինչ-որ շինծու-հակագիտական թղթակցություն կամ հողվածք, ասենք մի 200-300 տարի հետո ինչ-որ մեկի համար կարող է պատմական աղբյուր ծառայել և օգտագործվել օտարների կողմից, որն անցանկալի է: Իմ ցանկությունն է, որ ամեն մարդ զբաղվի իր գործով, որը շատ ավելի օգուտ կբերեր մեր ժողովրդին:

## ՂԱՐԱՔԱՂԻ ԷԹՆԻԿ ԿԱԶՄՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ 1800-1835Թ-Թ. ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՆՎԱԾՈՒՄ

(Լեռնիկ Հովհաննիսյան, ԱրՊՀ դասախոս)



Հայ ազգագրական գրականության մեջ Ղարաբաղի (Արցախի) և ընդհանրապես Հայաստանի բնակչության էթնիկ կազմի ուսումնասիրման հարցերն անբավարար են արտացոլված, այդ էլ այն դեպքում, երբ էթնոշակութային գործունեության շատ ոլորտներ կարող էին բացահայտվել հենց այդ հարցերի ուսումնասիրման հարթության վրա:

Ղարաբաղի խանության կազմավորումից հետո, տարածաշրջանի էթնոքաղաքական իրավիճակը խիստ բարդացավ. քոչվոր ցեղերի անընդհատ արշավանքները մի կողմից, մելիքների և Ղարաբաղի խաների հակամարտու-

թյունը մյուս կողմից, հայ ժողովրդին դրեցին աղետալի կացության մեջ: Արցախահայությունը XIII դարի երկրորդ կեսից սկսեց թողնել հայրենիքը և գաղթել Վրաստան, Ռուսաստան, Շաքիի և Շամախու խանություններ:

Վրաստան գաղթեցին գլխավորապես Գյուլիստանի, Վարանդայի բնակչությունը: Վարանդացիները բնակվեցին Լոռիում և Բորչալուի մի մասում, իսկ գյուլիստանցիները՝ Մելիք Աբովի գլխավորությամբ բնակվեցին Բովնիսում, Բորչալուի մնացած մասում և Աղջ-կալայում:<sup>1</sup>

Արցախի հայ բնակչության նվազմանը նպաստեց նաև 1797-1798թթ սկսված սովն ու ժանտախտը:<sup>2</sup>

Իրենց սոցիալ-քաղաքական դիրքերը Ղարաբաղում ամրացնելու նպատակով Փանահ և Իբրահիմ խաները հայկական ամայացած գյուղերում բնակեցնում են քեճգերլու, դեմիրչի-հասանլու, քուլանի, փյուսյան սաֆի-բյուրդ, ղըզըլիաջլիլի, բոյահմեդլի, սասաթլի և այլ քոչվոր ցեղերի:<sup>3</sup>

XIXդ. սկզբի Ղարաբաղի հայ բնակչության թվի մասին կարելի է դատել ռուս պետական և զինվորական գործիչների հաղորդագրություն-

1 Րա.Ֆիֆի, Խամսայի մեյիթությունները, հ.9, Երևան, 1987, էջ 531:

2 Մ.Բարխուդարյանց, Աղվանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999, էջ 157:

3 Ахмед-бек Джеваншир, О политическом существовании Карабахского ханства 1747-1805 гг, Шуша, 1901, էջ 11:

ներից: Իշխան Յիցիանովը Ալեքսանդր առաջինին գրած մի նամակում նշում է, որ Ղարաբաղի 60000 տուն հայ բնակչությունից մնացել է ընդամենը 4000-ը<sup>4</sup>:

1817թ. գեներալ Երմոլովը Ալեքսանդր առաջինին ուղղված մի գեկուցագրի մեջ նշում է, որ «Ղարաբաղը 1805թ. ռուսական պետության կազմի մեջ մտնելու պահին ուներ ավելի քան 10000 ընտանիք, 1808թ.՝ 7474 ընտանիք, 1812թ. ցուցակագրության ժամանակ մնացել էր ընդամենը 3080 ընտանիք, այն էլ գրկված գայության միջոցներից, 1813թ. հետո երեք տարվա ընթացքում Պարսկաստանից վերադարձան 4000 ընտանիք»<sup>5</sup>: Ցավոք սրտի գեկուցագրի մեջ տվյալներ չկան արտագաղթողների և ներգաղթողների էթնիկ կազմի վերաբերյալ:

Որոշ տվյալների համաձայն 1815թ. Ղարաբաղում կար 24000 ընտանիք<sup>6</sup>:

1822թ. Ղարաբաղի խանությունը վերածվում է պրովինցիայի, որը ենթարկվում էր ռազմական նահանգապետին: 1823թ. ցարական կառավարությունը կատարեց առաջին ցուցակագրությունը: Ըստ այդ ցուցակագրության տվյալների Ղարաբաղի պրովինցիայում կար 17414 ընտանիք, որից 5144 հայ ընտանիք, 3791՝ քաթար, 8114՝ քոչվորներ, 365՝ ջերբայիցի քրդեր<sup>7</sup>:

Ղարաբաղի լեռնային մասի բնակչության թիվը կազմում էր 36.5 հազար մարդ, որից 3.8 հազարը հայ (84.6%), 5.4 հազարը՝ քաթար (14.7%), 0.3 հազարը՝ քուրդ (0.7%): Գյուղական բնակչությունն ուներ հետևյալ պատկերը. գյուղերում ապրում էր 28.2 հազար մարդ, որից հայեր՝ 27.5 հազար (97.5%), քաթարներ՝ 700 մարդ (2.5%): Այդ նույն աղբյուրի համաձայն Շուշի քաղաքի բնակչությունը կազմում էր 8.3 հազար մարդ, որից հայեր՝ 3350 (41%), քաթարներ՝ 4670 (56%), քրդեր՝ 300 (0.7%)<sup>8</sup>:

1828թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրի համաձայն պարսկահայերին իրավունք տրվեց գաղթելու Արևելյան Հայաստան:

Ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Պասկևիչը երկու անգամ նշել է պարսկահայերին Ղարաբաղում բնակեցնելու անհրաժեշտությունը: 1828թ. փետրվարի 26-ին նա Լազարևին ուղարկած նամակում գրում է. «Ընդհանրապես քրիստոնյաներին պետք է համոզել, որ պետք է նրանք հաստատվեն Նախիջևանի և Երևանի մարզերում, որտեղ նախատեսվում է ավելացնել քրիստոնյա ազգաբնակչությունը: Իսկ Ու-

զունչիի և նրան հարակից հայկական բնակավայրերի բնակչությանը թույլատրել անցնելու Ղարաբաղ, քանի որ այդ երկրամասը մոտ է նրանց»: Նույն քվականի ապրիլի 24-ին նա նորից նշում է գաղթականներին Ղարաբաղ ուղարկելու անհրաժեշտության մասին<sup>9</sup>:

Չնայած ռուսական հրամանատարության ջանքերին, Ղարաբաղ եկավ ընդամենը 750 հայ ընտանիք: Սակայն զանազան հիվանդությունների և քոչվորների հարձակումների պատճառով 300 ընտանիք հեռանում է:

Ավելացնենք, որ Ղարաբաղ գաղթեցին Ղարաղաղից, Մարաղայից, Խոյից եկածները: Ղարաբաղ գաղթածների մեծ մասը, ըստ Մ. Եպս. Բարխուդարյանցի, բնակություն հաստատեցին Դիզակի Սարենշեն, Քարազուխ, Ծակուռի, Մյուլքաղարա, Խժաբերդ, Տագ, Ջրակուս գյուղերում, իսկ Ամրագյուլ և Քյանի գյուղերից գաղթածները՝ Ջրաբերդի Ջանյաթաղ գյուղում, Խոյից գաղթածները բնակություն հաստատեցին Խաչենում (Մեհտիչենում, Սարդարաչենում, Նորագյուղի մի մասում)<sup>10</sup>: Մարաղայից գաղթածները բնակվեցին Ջրաբերդում:

Ըստ 1830թ. ապրիլի 24-ին Պասկևիչի գրած գեկուցագրի, Ղարաբաղն ուներ հետևյալ բնակչությունը. ըստ ընտանիքների՝ խաներ և բեկեր՝ 133, հայ հոգևորականություն՝ 113, մահմեդական հոգևորականություն՝ 83, պետական գյուղացիներ (քաթարներ)՝ 6494, պետական գյուղացիներ (հայեր)՝ 3167, բեկական գյուղացիներ (քաթարներ)՝ 3715, բեկական գյուղացիներ(հայեր)՝ 4484, հարկերից և տուրքերից ազատված բնակչություն (մասֆներ)՝ 2149 (հայեր և քաթարներ), ասորիներ՝ 83, ընտանիքների ընդհանուր թիվը 20420<sup>11</sup>:

Ասորիների Ղարաբաղում բնակություն հաստատելու վերաբերյալ կա մեկ այլ տեղեկություն. 1831թ. Նախիջևանից մոտ 100 ասորի ընտանիք տեղափոխվում է Շուշիի գավառ, որտեղ ապրելով մոտ 10 տարի, հետագայում վերաբնակվեց Երևանի գավառում<sup>12</sup>:

1832-1833թթ Ղարաբաղում անց է կացվում նոր ցուցակագրություն: Ըստ այդ ցուցակագրության տվյալների, Ղարաբաղի պրովինցիայում կար մեկ քաղաք (Շուշի) և 741 գյուղական բնակավայր՝ 20546 ընտանիքով, որից հայկական՝ 6491, մահմեդական՝ 13965<sup>13</sup>: Մահմեդական բնակչությունը ըստ էթնիկ պատկանելիության, կազմված էր քա-

4 Акты Кавказской Археологической Комиссии (АКАК), т.2, էջ 623:  
5 Присоединение Восточной Армении к России, т. II, Ереван, 1978, էջ 134:  
6 Н. Волкова, Этнические процессы в Закавказье, КЭС, т. IV, Москва, 1969, էջ 20:  
7 ЦГИА, ф.93, оп. I, Д.163:  
8 Նույն տեղում:

9 П. Мурадян, История память поколений, Ереван, 1990, էջ 93:  
10 Մ.Բարխուդարյանց, Արցախ, էջ 192-194, 177,240:  
11 Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ереван, 1993, էջ 61-62:  
12 ՀՀ ազգային փոքրամասնությունները այսօր, Երևան, 2000, էջ 50:

## ՍՈՒՐԵՆ ՇԱՔԱՐՅԱՆ

(ՀՀ հուշարձանների պահպանության  
վարչության գլխավոր մասնագետ)



«Ես անչափ ուրախ եմ, որ այսօր գտնվում եմ Արցախում, որն ինձ վրա անմոռանալի տպավորություն բողեց»,- գիտական համաժողովի վերջում ելույթ ունենալով, ասաց ՀՀ հուշարձանների պահպանության վարչության գլխավոր մասնագետ Սուրեն Շաքարյանը, որը նախ շնորհակալություն հայտնեց իրեն բացառիկ հնարավորություն ընձեռնելու և առաջին անգամ Արցախ երկրամասում գտնվելու առիթով, իսկ հետո՝ իր գոհունակությունը հայտնեց համաժողովի աշխատանքից՝ բացառիկ կազմակերպված անցկացվելու համար, հույս հայտնելով, որ ելույթներում և հարցադրումներում բարձրացված խնդիրները գործնականում լուծումներ կգտնեն:

թարներից և քրդերից: Ղարաբաղում բնակություն էին հաստատել թուրքալեզու հետևյալ ցեղերը՝ ջիվանջլիցիներ, դեմիրչի-հասանլու, թեքելու, մուղանլու, ջինլի խոջալ-սահլի, դիլաղարդա, քենգերլու, իմիրլի, սոֆուլու, սարըջալու և այլն:

Ղարաբաղում բնակություն հաստատած քրդերը բաժանված էին ցեղախմբերի, որոնցից ամենանշանավորներն էին՝ քոլանլիները, դարաչորլուները, հաջի-սամլուները, փյուսյանները, մինջուվանլուները և այլն<sup>14</sup>:

Հայ բնակչությունը ապրում էր գլխավորապես Ղարաբաղի լեռնային մասում, որտեղ կազմում էր բնակչության 84%:

Անդրկովկասում ռուս աղանդավորների առաջին բնակավայրերը հիմնվեցին Ղարաբաղում, որտեղ արքայիցին Դոնի դուխարյորներին և Տամբովի նահանգի մուլականներին<sup>15</sup>:

Այսպիսով, 1800-1835թթ ընկած ժամանակահատվածում Ղարաբաղը, ըստ ազգագրական հատկանիշների, բաժանված էր երկու մասի: Եթե նրա արևելյան հատվածում գերակշռում էր թուրքալեզու էթնիկ տարրը, ապա հյուսիսային և արևմտյան մասերն ունեին գերազանցապես հայ բնակչություն:

13 *Обозрение Российских владений за Кавказом в статистическом этнографическом, топографическом и финансовом отношениях*, ч.3, СПб, 1836, էջ 267:

14 *Նույն տեղում*, էջ 275:

15 *И.Долженко, Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении, Ереван, 1985, էջ 23:*

## Նայարարություն

*ընդունված 2001 թ. նոյեմբերի 7-ին Արցախի պաշտնությանն ու հուշարձանների պահպանության խնդիրներին նվիրված գիտական համաժողովի կողմից*

Լեռնային Ղարաբաղի հանրապետության տարածքում (ներառյալ ազատագրված շրջանները) պետական պահպանության տակ են առնված շուրջ 10 000 հուշարձաններ, որոնք ամենօրյա հսկողության, պահպանության կարիք ունեն:

Դիտարկումներն ու տեղում կատարվող ստուգումները բերել են այն համոզման, որ մասնավոր տեղական իշխանությունների անուշադրության հետևանքով սպառնալիք է ստեղծվում հուշարձանների պահպանությանը՝ հանգեցնելով դրաց ավերումներին ու ոչնչացմանը: Հուշարձանները վնասվում կամ ավերվում են անգույշության, անցյալի մշակութային ժառանգության նկատմամբ ունեցած անտարբեր ու անհոգ վերաբերմունքի, պետական մարմինների հրահանգների, որոշումների և օրենսդրության նկատմամբ անպատասխանատվության հետևանքով: Այսօր հինավուրց հուշարձանների ավերումը նաև հետևանք է գանձախուզության, որը չարիք է դարձել մեր իրականության մեջ:

Պատմահնագիտական հուշարձանների ավերումներին նպաստում է նաև տարբեր նկատառումներով հողերի հատկացման պրոցեսը: Ներկայումս, որոշակի վնասներ է հասցվում նաև պատմական միջավայրին, երբ առանձին մարդիկ այս կամ այն վայրերից հուշարձաններ են տեղափոխում իրենց գյուղերը, դրանք տեղադրում իրենց հարազատների շիրիմներին, տնամերձերում, աղբյուրների վրա, ճանապարհներին և այլն, դրանով իսկ խաթարում տվյալ տարածքի պատմությունը:

Պատմության և մշակույթի հուշարձանների անվթարությունն ապահովելու և դրանց պահպանության գործի բարելավման նկատառումներից ելնելով, դիմում ենք ԼՂՀ շրջանային վարչակազմներին.

ա) Անշեղորեն իրագործել «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված պահանջները:

բ) Շտապ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու առանձին հուշարձանների օգտագործումն այլ, անթույլատրելի նպատակներով:

գ) Անկախ զբաղեցրած դիրքից ու պաշտոնից խստիվ կերպով դատապարտել և պատժել բոլոր նրանց, ովքեր կփորձեն իրենց հակաօրինական գործողություններով այլասերել կամ սպառնալիք ստեղծել մեր նախնիների թողած պատմական ժառանգության պահպանության նկատմամբ:

դ) Ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ի հայտ բերելու և օրենքի ամբողջ խստությամբ պատժելու գանձախույզներին, որոնք ոսկի գտնելու մոլուցքով տարված, քանդում, ավերում են գերեզմանոցներ, դամբարաններ, եկեղեցիներ, գողանում հնագիտական իրեր, խաչքարեր, տապանաքարեր:

ե) Առանց համապատասխան թույլտվության իրավունքի, արգելել հուշարձանների ուսումնասիրությունները, վերականգնման կամ նորոգման աշխատանքները:

զ) Խստագույնս արգելել թաղումները պատմական հուշարձաններում:

է) Առանց պետական լիազորված մարմնի գիտության և թույլտվության թույլ չտալ ինքնագործունեություն: Հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողատկացումները, կառուցապատման, ինժեներատրանսպորտային հաղորդակցության ուղիների նախագծերը սահմանված կարգով համաձայնացնել լիազորված մարմնի հետ:

Հարգելի ընկերներ, Արցախում սփռված հազարավոր հուշարձանները մեր գոյության քարակերտ վկայագրերն են: Մեծ է նրանց դերն ու նշանակությունը հատկապես քաղաքական տեսակետից՝ Արցախը համաշխարհային հանրության կողմից հայերիս էթնիկ հայրենիքի մի մասը ճանաչելու գործում:

Եկեք միասնական ջանքերով պահպանենք և զարիք սերունդներին անխաթար հանձնենք Արցախ աշխարհի պատմության և մշակույթի հուշարձանները:

Հարգելի ընկերներ, վերջին ժամանակներս Արցախում և նրա սահմաններից դուրս նկատվում է օտարոտի ու դատապարտելի երևույթ: Ովքեր շուտ է արթնանում, թուրք ու գրիչ է վերցնում և զբաղվում «պատմագրությամբ»: Արցախյան շարժման ժամանակներից սկսած՝ մեկ տասնյակից ավելի նորաթուխ «պատմաբաններ» են ասպարեզ իջել, որոնք պատմագիտության հետ իրականում որևէ առնչություն չունեն, բայց, չգիտես ինչու, իրենց պարտքն են համարում շինացած բաների մասին բարձրաձայն արտահայտվել և աղավաղել մեր երկրամասի պատմությունը՝ հնագույն ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Այդպիսիների շարքում կան լրագրող, տնտեսագետ ու ֆիզիկոս, ճարտարագետ ու ճարտարապետ, գրող ու բանաստեղծ, գյուղատնտես, անգամ անասնաբույժ, որոնք մի զարմանալի ջանադրությամբ հանդես են գալիս ոչ միայն մամուլում, այլև այսպես կոչված «մեծագրություններին» տեսքով: Ոմանք, չարաշահելով իրենց պաշտոնական դիրքը և օգտվելով բնակչության անտեղյակությունից ու համապատասխան մասնագետների լրակցաց ու հարմարավորական վարքագծից, ինչ ցանկա-

նում տպագրում են՝ խեղաթյուրում արցախյան տեղանունները, կատարում շինծու, օղից բռնած ձևախեղումներ, մուռանալով, որ նման գործերակերպով ջուր են լցնում մեզ բարին չկամեցողների ջրաղացին: Ցավալի է նշել, որ առանձին հեղինակներ ինչ-ինչ նկատառումներով այդ ամենն անում են գիտակցաբար՝ ազնիվ հայրենասերի ու գիտնականի կեցվածք ընդունելով: Այդ ամենին մեծապես նպաստում են ոչ միայն առանձին հրատարակչություններ, քերթեր՝ տպագրելով չերաշխավորված նյութեր, այլև կազմակերպություններ, որոնք պարտավոր են իրենց ծանրակշիռ խոսքն ասել և համապատասխան զնահատական տալ:

Դիմում ենք հրատարակչությունների տնօրեններին, քերթերի խմբագիրներին և լրատվության մյուս միջոցներին՝ չերաշխավորված հոդվածներ, գրքեր, հաղորդումներ չհրապարակել: Արցախին նվիրված պատմագիտական, տեղանվանագիտական և հուշարձանների պատմությանը վերաբերող մասնագիտական հոդվածներն ու ուսումնասիրությունները պետք է հրապարակվեն ԼՂՀ մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության և ուսումնասիրման վարչության կամ Պատմական միջավայրի պահպանության Արցախի տարածքային ծառայության գիտական խորհուրդների համապատասխան կարծիքն ու երաշխավորությունն ունենալու դեպքում:

Ոչ ոք իրավունք չունի աղավաղել Արցախի պատմությունն ու տեղանունները: Պատմագիտությանը պետք է զբաղվեն պատմաբանները և ոչ թե այդ գործից հեռու պատահական մարդիկ:

Թող ամեն մարդ զբաղվի իր գործով:



## ՆԱՄԱԺՈՂՈՎԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Նամաժողովի մասնակիցները.

Առաջին պլանում ձախից աջ՝

Էդուարդ Աղաբեկյան (ԼՂՀ Ազգային ժողովի պարզամավոր, սոցիալական ոլորտի հարցերի մշակական հանձնաժողովի նախագահ), Մուշեղ Օհանջանյան (ԼՂՀ Ազգային ժողովի փոխնախագահ), Շահեն Մկրտչյան (հուշարձանագետ), Արմեն Սարգսյան (ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար), Սուրեն Շաքարյան (ՏՀ պարմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության գլխավոր մասնագետ), Վոլոդիա Բաբայան (Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու վերանորոգող վարպետ) եւ Զամալ Թադեոսյան (ՊՄՊ Արցախի պարածքային ծառայության պետ):



Զախից ազ՝ Մուշեղ Օհանջանյան (ԱԺ փոխնախագահ), Շախեն Մկրտչյան (Նուշարձանագետ), Արմեն Մարգարյան (ԼՂՏ նշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար)



Շախեն Մկրտչյանը աշից, երույթի պահին



Նանդիպուրն ԼՂՏ հուշարձանների պահպանության եւ ուսումնասիրման վարչությունում (ձախից՝ Զենայ Թադևոսյան, աջից՝ Մուրեն Շարսրյան)



RAA երեսանյան գրասենյակի պեդ Սամվել Կարապետյան






Այն կողմում Խոխանաբերդն է

Ամարասի վանքի մուտք



**Ամարաս.** ձախից՝ Սուրեն Շաքարյան (ՆՃ հուշարձանների պահանության վարչության գլխավոր մասնագետ), Մանվել Մխիթարյան (ԼՂՏ հուշարձանների պահպանության եւ ուսումնասիրման վարչության գլխավոր մասնագետ), Սլավիկ Արզումանյան (ԼՂՏ Մարտունու վարչակազմի մշակույթի բաժնի պետ)



ԼՂՏ Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարություն

## ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՆՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՊԱՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱՄԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԸ


Նամակարգչային շարվածքը, սրբագրումը, խմբագրումը՝ ԼՂՏ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարության

«Նոյան փապան» լրագրական կենտրոնի հրատարակչություն

Նրապ. խմբ.  
Տեխ. խմբագիր՝  
Մոնրաժը՝  
Տպագրիչներ՝

Լ. Խալափյան  
Գ. Գրիգորյան  
Ա. Ազարյանի  
Ս. Չիչյան  
Ա. Ազարյան

«Նոյան փապան» փապագրափուն  
Երեւան 9, Բսահակյան 28,  
հեռ./ֆաքս (3741) 56-19-05, 52-42-79  
E-mail: [contact@noyan-tapan.am](mailto:contact@noyan-tapan.am)  
URL: <http://noyan-tapan.am>



  
ՆՈՅՅՈՒՆ ՏԱԳՈՒՆ